

891.99.092 Kaufhalle
h - 85



396

ՅՈՎՅԱՆՆԵՍ


ՅՈՎՅԱՆՆԻՄԵԱՆ

Ա. Տ. Թ.

Գ. Ա. Դ. Ա. Բ Շ Ա. Պ Ա. Տ

Ելեմատարժ Տպարան Ա. Էջմիածնի

1914



80

891.99.092 Հայեարք.

2-85

-16 NOV 2011

Ա. Տ.

ՅՈՎՐԱՆՆԵՍ

ՅՈՎՐԱՆՆԻՍԵԱՆ

Ա. Տ. Թ.

Վ. Ա. Դ. Ռ Շ Ա. Պ. Ա. Տ.

Ելեֆտառած Տպարան Ա. Եղիմածնի

1914

1.2 JUN 2013

70.080

**

Զեռնարկելով մեր այս աշխատութեանը՝
մենք բնաւ նպատակ չունինք իբրև քննա-
դատ հանդէս գալու, քննադատ, որ ըստ մեր
դատողութեան պիտի բանաստեղծին ցոյց
տայ նրա պակասովթիւնները, շեշտէ նրա
թերութիւններն, ապագայում դոցանից զերծ
պահելու համար, բացէ նրա առաջ աւելի
բարձրի, վսեմի ու գեղեցկի՝ ուրեմն բարու
և առաքինու ճանապարհը, առաջնորդէ նո-
րան դէպ կատարելութիւն, դէպ գերագոյնի
եզերքը...

Քննադատն՝ այս իմաստով, մեր ուժե-
րից և ուսակութիւններից բարձր անձն պի-
տի լինի:

Այս աշխատանքն սկսելիս մեր գլխա-
ւոր նպատակն է եղել գեղագէտի գաղա-
փարներն ու իդէալները ժողովրդի՝ ընթեր-
ցողների աւելի լայն մեծամասնութեան սե-
փականութիւն դարձնել:



473355

Զնայելով բանաստեղծի յոքելեանից
դեռ շատ առաջ այս աշխատութիւնը պատ-
րաստէր, բայց անկարող եղանք իր ժամա-
նակին լոյս ընծայել, որովհետև մեր իր մքա-
գրի միշտ անդորր, երբէք չվրդովող
բարեխղճութիւնն արգելառիթ հանդիսացաւ
դորան:

Բայց լաւ է ուշ, քան երբէք... Եւ մեր
աշխատութեան այս հրատարակութեամբ
յանդգնում ենք նոյն այդ անձանց առաջ
դատապարտեալի գերում հանդէս գալ:

Զմոռանանք մեր սրտագին շնորհակա-
լութիւնը յայտնել օր. Հ. Քօշեանին և պ. Գ.
Կոստանեանին, որոնցից առաջինը սիրա-
յօժար յանձն առաւ աշխատութեանս արտա-
գրելը, իսկ երկրորդը մեզ տւեց կենսագրա-
կան շատ տեղեկութիւններ:



1864 թուի ապրիլ 26-ին Վաղարշապատ
գիւղի մի շատ համեստ ընտանիքում ծնւեց Յով-
հաննէս մանուկը, որին բաղզը վիճակել էր մեր
փոքրիկ գրականութեան պիոներներից աւագա-
գոյնը դառնալ: Երջանիկ աստղի տակ էր ծնւել նաև
բաղզը նորանից շատ քիչ անգամ է երես դարձրել:
Նորա հայրը, որ ծնւել է 1836 թ. յունաբի
16-ին և մեռել 97 թ. մարտի 25-ին, ժամանակի
յարգանք վայելող անձերից է եղել, ինչու և յա-
ճախ գիւղի տանուտէր էր ընտրում: Նորա անու-
նը Մկրտիչ էր և գիւղում «Դերձիկ Վարդանենց
Մուկուչ» անւամբ էին նորան ճանաչում: Իդէպ
է յիշել, որ «հացթուխ Մկրտիչ» անւամբ, ինչ-
պէս 1912 թ. «Մարտ»-ի № 1-ում պ. Մ. Բար-
խուդարեանն է անւանում, Յովհաննիսեանի հօրը
գիւղում ոչ ոք չի ճանաչում կամ յիշում, Դա մի
թիւրիմացութիւն է, և ահա ինչպէս առաջացած
կլինի.—Դերձիկ Վարդանենց Մուկուչը երեք տա-
րի շարունակ փուռ է ունեցել, բայց հաց չի թխել,
այլ ունեցել է իր հացթուխը¹⁾: Փուռ ունենայն
ու հացթուխ լինելն հաւանօրէն խառնել են իրար:

Դերձիկենց Մուկուչը ժամանակի հազւագիւտ

1) Էջմիածնի վանքի փուռն էր այս, որ 1886, 87 և
88 թւերին կապալով էր գեղցրել նա:

գրագէտ անձերից էր: Նա սովորել էլ Դասիէլ
եպիսկոպոսի մօտ. սրա միջոցով նա այնպէս է
ծանօթանում ժամանակի գրական լեզվին՝ գրա-
բարին, որ կարողանում է աղատ կարդալ ու հաս-
կանալ: Նա լաւ տեղեակ էր Զամշեանի քերակա-
նութեանը և, շատերի վկայութեամբ, մեծ մասն
էլ անգիր գիտէր:

Պարզ է, որ այսպիսի մի հայր չէր կարող
անուշագրութեան մատնել իր որդուն, որը հենց
փոքրուց աչքի էր ընկնում իր սրամտութեամբ:
Փոքրիկ Յովհաննէսը դեռ 6 տարեկան էր, երբ իր
հօրից սովորեց գրել կարդալ: Տարբական այս
առաջին գրագիտութիւնը հօր մօտ սովորելուց
յետոյ, Յովհաննէսը մտաւ տեղական ծխական
դպրոցը, ուր սակայն երկար չմնաց: Մի տարուց
յետոյ հայրը հանեց նորան և տես Վահան վար-
դապետ Բաստամեանի մօտ: Սա վանական միա-
բանութեան ուսեալ և կրթւած անձերից էր, որ ուշ-
սական բարձր կրթութիւն էր ստացել՝ Մոսկուայի
համալսարանում իրաւագիտութիւն ուսումնասի-
րելով: Մի տարի յետոյ Յովհաննէսը գնաց երևա-
նի պրոգիմնազիան, ուր մնաց մինչև 1877 թիւը:

Դերձիկենց Մուկուչը, որ ընտանիքով էր
ծանրաբեռնած, դժուար թէ որդուն մեծ ուսում
տալ կարողանար, եթէ բաղդը չժպտար նորան
և էջմիածնի վանքը մանուկ Յովհաննէսին չու-
ղարկէր Լազարեան ծեմարան, ուր նա ընդունւեց
գ. դասարան:

Այնուհետև նորան տեսնում ենք Լազարեան
ծեմարանում մինչև 1883 թ., երբ նա, շնորհիւ իր
ընդունակութիւնների ու յառաջադիմութեան, ար-
ծաթեայ մեղալով աւարտում է ծեմարանի լիա-
կատար դասընթացը: Այն ժամանակ ծեմարանը
գեռ աչքի էր ընկնում հայերէնի իր լաւ ուսուց-
մամբ և Յովհաննիսեանը կարողանում է հիմնա-
ւոր կերպով ուսումնասիրել մայրենի լեզուն:
Առարկաներից առանձնապէս լեզուների մէջ է ցոյց
տւել նա իր ընդունակութիւնները և բոլոր դա-
սարաններում լեզուներից առաջին աշակերտների
շարքում է կանգնած եղել:

Յաջորդ՝ 85-թւին Մոսկուայի համալսարան
ընդունւելով, նա իրեն մասնաճիւղ է ընտրում
իր սիրած առարկաները և պատմա-լեզուագիտա-
կան բաժինը մտնում: Յովհաննիսեանի ուսանո-
դական այս շրջանը մեզ քիչ է յայտնի:

88-թւին աւարտելով համալսարանը, նա
ընդունեց Գէորգեան ծեմարանի հրաւէրը, որ ուռ-
սաց լեզուի ու պատմութեան դասեր էր առաջար-
կում նրան: ծեմարանում մի քանի տարի պաշտօ-
նավարելուց յետոյ, նա գնաց Թիֆլիսի Ներսիսեան
դպրոցը, ուր սակայն երեք տարի մնալուց յետոյ,
նա կրկին վերադարձաւ ծեմարան՝ իր նախկին
պաշտօնին:

1900 թւին նրան հրաւէրեցին Թիֆլիսի Յովհ-
աննեան գպլոցի տեսչութեան պաշտօնն ստանձնե-
լու: Մի տարի յետոյ նա թողեց այդ պաշտօնը և

Կրկին վերադառնութեամ վաղարշապատ ու ձեմարանի դասարաններում ոռուաց լեզվից բացի, լսարաններում աւանդում էր ոռուաց և ընդհանուր գրականութիւն։ Վերջին տարիներում նա վարում էր նաև Սինոդի ատենադպրի պաշտօնը։ Աւելի ուշ ժամանակներս հրաժարուելով ձեմարանի դասերից, Յովհաննիսեանը միայն Սինոդի ծառայութիւնն էր վարում մինչև 1912 թւի ամառը, երբ Բագրի քաղաքային խորհուրդը հրաւիրում է նորան տեղական դպրոցների վերատեսչութեան պաշտօնին։

Յովհաննիսեանը շատ վաղ է գրել սկսելու աշակերտական սեղանից նա գրում էր ոտանաւորներ և իր ընկերներից միայն շատ քչերի մօտ էր կարգում։ Այդ ժամանակներում ձեմարանում համարեա միշտ աշակերտական թերթեր էին հրատարակում, որոնց մէջ Յովհաննիսեանը դետեղում էր իր սկսնակ երկերը։ Ձեմարանում զանազան ժամանակ հրատարակում էին «Մըրթիւն», «Մանկական գրիչ», «Ծրցյա» և այլ թերթեր, որոնց մէջ երբեմն գրում էր նաև Յովհաննիսեանը։ Նրա առաջին ոտանաւորը, որ 1880 թւի Աղբիւր ամսագրի համարներից մէկում տպագրւեց, մի թարգմանութիւն էր Առնոյից և Աղբիւրից առաջ դետեղուել էր աշակերտական «Յոյս» թերթում։ Սակայն գրական ասպարէզ նա գուրս եկաւ միայն 1882 թւին, երբ Արարատում տպագրել տւաւ Գեօթէից արած իր մի նոր թարգմանութիւնը։

80-ական թւականներին Լազարեան ձեմանի մի խումբ հայ ուսանողներ հիմնեցին «Գրական ընկերութիւն» անւամբ մի խմբակցութիւն, որի անդամներն, առնւազ տարին մի անգամ, պարտաւոր էին ուեֆերատներ կարգալ իրենց ընկերներին։ Գնալով այդ ընկերութիւնն ընդլայնեց իր գործունէութիւնը և սկսեց հրատարակչութեամբ էլ գրադեկլ։ Այս ընկերութիւնը չորս համար գրքեր հրատարակեց և, հինգերորդի (Յ. Յով.) հրատարակութիւնն էլ մի կերպ գլուխ բերելուց յետոյ, դադարեց գոյութիւն ունենալուց։

Ընկերութեան անդամներից մի քանիսը մի օր «պալերմօ»-ում հաւաքւած խօսում են այդ առթիւ և տեսնում, որ կարիք եղածի չափ փող չունին. որոշում են հանգանակութեան դիմել և այդ մասին ոչինչ չասել Յովհաննիսեանին։ Արդէն պէտք եղած գումարի կէսը հաւաքել էին, երբ Յովհաննիսեանին յայտնում են իրենց նպատակը. Վերջինս ընկերական այդ հոգատարութիւնից և անկեղծութիւնից արտասում է։ 87 թւին տպագրում է նրա երկերի առաջին փոքրիկ ժողովածուն։ Այնուհետև Յովհաննիսեանն իր ոտանաւորներն ուղարկել է հայկական զանազան հրատարակութիւնների և միայն 1908 թւին Բագրի Հայոց Կոլլատուրական Ընկերութիւնը հրատարակեց նրա բանաստեղծութեանց աւելի լրիւ ժողովածուն, ուր սակայն շատ ոտանաւորներ, մեզ անհասկանալի պատճառներով, տեղ չեն բռնել։

Բացի ոտանաւորներից Յովհաննիսեանն ունի
նաև արձակ գրւածքներ։ Նորա ոտանաւորներից
մի քանիսը թարգմանւած են ոռուսերէն։ բայց
նա ինքն էլ հէնց ոռուսերէն լեզուվ ոտանաւորներ
ունի։

Վերջերս նա թարգմանեց Խւշկկիչի «Թա-
գաւոր»-ը, որ Հ. Հր. Ընկերութիւնը տպագրութեան
յանձնեց և «Հանրային Մատենադարանի» համար-
ների շարքում զետեղեց։

Երեսուն տարի...

Ահա մի թիւ, որ ուրիշների համար շատ-
աննկատելի կերպով անցնելով, կախարդական-
ներնչմամբ աղմկում է Յովհաննիսեանի կեանքի-
տարիններում։ Երեսուն երկար ու ձիգ տարիներ
են անցել այն օրից, երբ մեր գրական աննախան-
ձելի ասպարէզում, իր ապագայ կեանքի բարելա-
ւումը մոռացած, ոտք գրեց սիրոյ ու թախծի,
ոգեորութեան ու կարեկցութեան պատկառելի
երգիչ։

Երեսուն տարի... մի չնչին ժամանակամիջոց
մեզ՝ շատերիս համար, բայց մի անընդհատ-
յաէրժութիւն Յովհաննիսեանի թովչութեանը։
Եւ նվ է այն միակ ընթերցողը, որ չգիտէ «Արագն
եկաւ»-ի ստեղծագործողին, ողջ գիւղացիութեան
հոգսերը մի փոքրիկ հատիկի մէջ զետեղողին։ Ո՞վ
է այն ապրող անձը, որ

«Լուռ կաց սիրտ իմ, այս աւխարհում
«Դարդ իմացող չես գտնի»։

ոտանաւորի ապրումներն իր սեփական ապրումներ-
չի համարում։ Անշուշտ եղակի է այն դժբախտ-
ների թիւը, որոնք չգիտեն թէ՝

«Լաւ է ազատ լաց բլնիլը, բանց դարդ
տանիլն անմռունչ»։

Երեսուն տարի է եղերում այն օրից, երբ
նա գեղեցկութեան ու սիրոյ պատկերին երկրպա-
գելու պատւէրն ստացաւ: Այդ օրւանից նա մեզ
մեց գեղեցկով, սիրով և կարեկցութեամբ: Խօսել
այն մասին, թէ ինչ աղքեցութիւն է ունեցել նա
մեր մասուկ սերնդի հոգու և սրտի կաղմակերպ-
ման վրայ, մեզ հեռուն կտանի: Միայն կասենք,
որ անթիւ գրագէտ մանուկներ անթիւ անգամ
ոգևորել են նրա երկերով... Իսկ ոգևորելն հո-
գու այն ամենայարմարին դրութիւնն է, երբ նա
շատ շուտ ու հեշտ է զանազան զգացմունքների
հաղորդակից դառնում և ցանկացած ուղղութիւն-
ներն ընդունում: Որ և է զգացում վարակիչ
դարձնելու համար անհրաժեշտ է այդ ուղղութեամբ
գրգռել հոգին՝ ոգևորել: Իսկ Յովհաննիսեանի
ուսանաւորները շատ անգամ են սիրով, խրախու-
սով, կարեկցութեամբ և այլ վեհ զգացումներով
մեզ ոգևորել, զրգուել, ուրեմն և դոցանով վարակել
մեզ: Իսկ նորա լեզւի, ոճի աղդեցութիւնը խօմ
անուրանալի է մեր քիչ բանաստեղծներից շա-
տերի վերայ: Յովհաննիսեանի հայերէն լեզվի հոյա-
կապ շնորը մի օրինակելի ուղեցոյց է գեղեցիկ
գրել ցանկացողի համար:

Ինչպէս յայտնի է գրականութիւնը մի հա-
յելի է, որի մէջ արտացոլում ու պատկերանում է
միջավայրի և էպոխայի բարքերը, ձգումներն,
իդէալներն ու գաղափարները:

Որքան յդկւած, կոկւած է հայելին, այնքան
պարզ, այնքան ոելիեք է անդրադարձնում իր
շրջապատը, որքան մշակուած՝ ճոխ է գրականու-
թիւնն, այնքան օրիեկտիւ և ոէալ են իրական
աշխարհն ընդգրկող, կեանքի ողջ բարդ մեխա-
նիզմը պատկերացնող նորա միջի փաստերը:

Այդ է գրականութեան միսիան և իր այդ
պաշտօնին նա միշտ էլ հաւատարիմ ծառայել է,
թէև զանազան դարեշրջաններում և տարբեր
ժողովուրդների մօտ աւելի կամ պակաս յաջողու-
թեամբ: Թէ գրականութեան այս կամ այն ճիւղն
ինչ ուղղութեան ու նպատակի պիտի ծառայի,
դա էպոխայի արամագրութիւնն է որոշում: Այս-
պէս միջնադարի գրականութեան էական և աշքի
ընկնող կողմը եկեղեցին էր: Եկեղեցին էր, որ
տէր ու տնօրէն էր գառել ժամանակի փիլիսո-
փայութեան-սխոլաստիկային, որի գլխաւոր հիմքն
աւելի շուտ եկեղեցական հայրերի քարոզած
գաղափարներն էին, քան աչալուրջ քննադատու-
թեան և ուսումնասիրութեան պտուղները:

Չնայած կրօնական խնդրում մարդկային ինտելեկտը ոչ մի գեր չունի կատարելու և դուրանում առաջնութիւնը միայն և միայն սրտին է պատկանում, բայց և այնպէս եկեղեցին իր հուժկու աւտորիտետը տարածել էր նաև մարդկային զգացումների ու դատողութեան վերայ, որը եկեղեցուց դուրս ոչինչ խոհական և բանական չէր ուզում տեսնել: Նա էր, որ ուղղութիւն էր տալիս դարի ճարտարապետութեան, որի սիրած ոճը, միջնադարեան կեանքի ձգտումները լաւ պատկերացնող՝ գոթական ոճն էր, ժամանակաւոր կեանքից դէպի յաւիտենականը տանող իր սրածայր արկաներով:

Միջնադարը կամաց կամաց տեղի է տալիս իրեն շատ բաներում հակասող մի նոր ուղղութեան: Նորան յաջորդում է մի ուրիշ շրջան և ահա փոխում է գրականութեան խարակտերը՝ բնոյթը: Ազատւելով եկեղեցու հպատակութիւնից, մարդկային միտքը խիստ ազատ է զգում իրեն և ժամանակակից գրականութեան համարեա բոլոր գժւարագոյն խնդիրներով զբաղում է և աւելի կամ պակաս չափով հետաքրքրում: Այս շրջանը վերածնութիւնն էր, որ իր յատուկ գունաւորումը տւեց գրականութեանը: Վերածնութեան թեմաները բոլորովին նորութիւններ չէին... Համաշխարհային գրականութեան պատմութեան մէջ ոչինչ իբրև բացարձակ նորութիւն առաջ չի գալիս: Ինչպէս անհնար է ներկայ ժամանակի մասին

խօսել, որովհետև վերջինս դատողութեան համար կամ անցեալ է կամ ապառնի, բայց ոչ երբէք ներկայ, այնպէս էլ չի կարելի գրականութեան մէջ մի ապսոլիտ նոր ուղղութիւն մատնանշել:

Ամեն մի շրջան նախընթաց շրջանի մնացորդների և յետագայ շրջանի տրամադրութեան ազգեցութեան պրոդուկտն է: Այսպէս անհնար է որոշել այն ուղիղ սահմանը, որտեղ վերջանում է վերածնութիւնը և սկսում բարենորոգման շրջանը, կամ մատնանշել այն մոմենտը, երբ խորհրդաւոր ու դէպի յաւերժութիւնը ձգաւող ոռմանտիզմը տեղի է տալիս դաժան ու բծախնդիր ոէալիզմին:

Մի անգամ արդէն ասացինք, որ գրականութիւնը շրջանի ու միջավայրի տրամադրութեան համեմատ փոխում ու նրա գունաւորումն է ստանում: Եւ յիրաւի՝ Իպակ, Տէնն ասում է՝ «Վստահութեամբ կարելի է ասել, որ եթէ մէկն ուզում է հասկանալ գեղարւեստագէտի ճաշակն ու տաղանդը, հասկանալ այն պատճառները, որոնք դրել են նորան պոէզիայի կամ գեղարւեստի այս կամ այն տեսակն ընտրել, առաւելութիւն տալ այս կամ այն տիպին կամ կոլորիտին, այս կամ այն զգացումները պիտի որոնել հասարակութեան ընդհանուր բարքերի ու տրամադրութեան մէջ»¹⁾) Բանաստեղծութիւնն էլ գրականութեան մի

1) «Փիլոսոփիա искусства». Ипп. Тэнъ. перев. съ франц.

մասը լինելով, այսպէս թէ այնպէս պիտի արտաշայտող հանդիսանայ զարեցրջանիու միջավայրի ձգտումներին ու վերապրումներին, պիտի արտաշայտիչ դառնայ կեանքի շատ երակներին իրենց բոլոր դրական ու բացասական գունաւորումներով։ Ճիշտ է բանաստեղծութիւնն աւելի անհատական բնոյթ է կրում, բայց չէ որ բանաստեղծող անհատն էլ ենթակայ է իր շրջանին ու միջավայրի մտաւոր ու բարոյական ապրումներին, չէ որ ամեն մի անհատ իր հոգու էական գծերով միջավայրի հարազատ ու տիպիկ արտայայտութիւնն է առհասարակ։ Ահա այս հանգամանքների ազդեցութեան և ուժի չնորհիւ է, որ ինդիվիդուալիստ պոէտն անգամ կտրուած չէ դարից ու շրջանից և անհատական տեսչերի, ձգտումների, գաղափարների ու որոնումների մէջ ժամանակի ոգին ու տրամադրութիւնն է արտայայտում։

Այսպիսով բնաւ չցանկանալով ժխտել այն, որ բանաստեղծը խիստ ընդգծւած ու շեշտած կարող է արտայայտել իր անհատականութիւնն այս կամ այն երկում, կամ իխստ տիպիկ կերպով տալ իր հոգեկան ուրոյն աշխարհը, բայց այնուամենայնիւ, համոզած ենք, որ նոյն միջավայրի էական ձգտումների ու դատողութեանց կրող ու արտայայտիչ է հանդիսանալու։

Յիշեալ պարագաներին ենթակայ է ամեն մի բանաստեղծ, իհարկէ, աւելի կամ պակաս չափով։ Բայց պատահում է նաև մի քիչ այլ երկոյթ։

Այն, որ որևէ անհատ գրող, հակառակ գնալով հասարակական ընթացքին և արամազրութեան, շնորհիւ իր տաղանդի, մտքերի և գրութեան շեշտի, կարողանում է յեղաշրջել այն ու մի նոր և ուրոյն ուղի մատնանշել։ Այսպիսի տաղանդների շնորհիւ է, որ այս կամ այն ուղղութիւնը կամաց կամաց տեղի է տալիս մի ուրիշ ուղղութեան։ Մակայն սորա համար էլ հասարակական արամազրութեան մէջ պիտի յարմարաւոր՝ թէկուզ չգիտակցած, հող լինի պատրաստուած, այլապէս ամեն մի նորութիւն, գոնէ առ ժամանակ, մոռացութեան կմատնւի։

Սովորականը սակայն առաջինն է, այսինքն, որ անհատն արտայայտիչ է դարւում շրջապատի արամազրութեան։

Սա գեղարւեստի մի, և ըստ մեր գատողութեան միակ սաոյդ, հասկացողութիւնն է, որն աւելի է տարածւած։ Կայ նաև մի այլ հասկացողութիւն — «Գեղարւեստը՝ գեղարւեստի համար»։ Այս ընօրոշման տակ մենք չենք հասկանում և չպիտի էլ հասկանալ այն, ինչ որ ընդունում են շատերը։ Այսինքն չպիտի ընդունել, որ գեղարւեստն առօրեայ կետնքից պիտի միանգամայն կտրւած լինի և գեղեցիկն ու գեղարւեստն արտադրի հենց լոկ գեղեցիկ ու գեղարւեստի համար։ Այսպէս վարելու մենք կրկնակի պատճառներ ունիք։ — Նախ՝ որ անհնար և ապաղիւտ կերպով անիրականալի է, որ մարդկային մաքի, մարդկային

4733



հոգու արտադրութիւնը միանգամայն կտրւած լինի կեանքից: Որովհետև ինչ է խակական կեանքը, եթէ ոչ հոգու և ուղեղի համերաշխ գործունիութեան գիտակցւած ապրումների մի անընդմիջւող շարք: Իսկ ինչ է մտքի և հոգու արտադրութիւնը, եթէ ոչ այդ գիտակցւած ապրումների ու տենչերի ֆորմալ ձեակերպումն ու նկարագիրը: Էականապէս գոքա միենոյն բաներն են, որ տարբեր կողմերով են մեզ հանդիսանում: Մէկը՝ ոչալ և իրական ապրումների միջոցով. միւսն՝ այդ ապրումների ձեակերպւած ֆորմայով-պատկերով: Այսպէս «գեղարեսատը՝ գեղարւեստի համար» հասկացողութիւնը, որ կեանքից կտրւած լինելն ի նկատի ունի, եթէ պարզ ֆորմուլայի վերածելու լինինք՝ կտանանք «կեանքը՝ կեանքից դուրս», որ, ինչպէս տեսնում էք, մի ծիծաղելի պարագոքս է:

Երկրորդ պատճառն էլ այն է, որ եթէ ընդունենք էլ, որ գեղարւեստն իր էութեան ու գաղափարով ծանրակշիռ ու գերազոյն մասով ամենից առաջ ու ամենից շատ էստետիկան, գեղեցիկը, բարին և դուրեկանն ի նկատի ունի, այն ժամանակ էլ կամայ թէ ակամայ կեանքին է շաղկապւում, կամայ թէ ակամայ մարդկային բնութեան, հոգու բարդ աշխարհի այս կամ այն տարրի բաւարարմանն է ծառայում: Այսպէս է, որովհետև էստետիկան, գեղեցիկն ու բարին ինքն ըստ ինքեան մի մի ոչալ գոյութիւններ չեն, որ առանց կեանքի էլ իրենց բաւարարման միջոց-

ներն ունենան, այլ գոքա մարդկային կեանքի որակումներ, բնորոշումներ և գնահատումներ են:

Մարդկային բոլոր գործերը, եթէ չեն ուղում գատարկ և ապարդիւն անցնել, պիտի յօգուտ մարդկանց ծառային: Հարստութիւնը նրա համար է, որ մարդ նրանից օգտւի, գիտութիւնն էլ նրա համար է, որ մարդկանց համար ուղեցոյց լինի, գեղարւեստն էլ պիտի որ և է էական օգտի ծառայէ և ոչ թէ լոկ գատարկ բաւականութեան համար լինի¹⁾:

Ահա... այս համոզմանց և ըմբռնումների կողմանակից լինելն է, որ մենք էլ, ըստ Պլատոնի և Ռուսոյի ուստիլիտար հայեացքի, չենք ասի, թէ «մի ֆունտ բուրդ մանելն աւելի օգտաւէտ է, քան մի հատ ոտանաւոր գրելլ»: Զենք-ասի, որովհետև գեղարւեստի գերը մեծ է կեանքի մէջ:—Միթէ մեծ ծառայութիւն չէ այն, որ նա կերտում է մարդու հոգին, նրացնում է մեր հակումներն ու ճաշակը, մշակում մեր զգացումներն ու տենչերը:

Ներկայիս համար խիստ խորթ է գեղարւեստը գեղարւեստի համար հասկացողութիւնը, ասում է Զերնիշևսկին, կամ ինչպէս Ժանդն է ասում՝ «գեղարւեստը, եթէ միայն գեղարւեստ է, խիստ անզօր է»: 2)

Եւ յիրաւի, արդի գրականութեան լաւագոյն

1) Литературные характеристики А. К. Бородинъ, СПБ.

2) Ж. Зандъ. Е. Каро.

Ներկայացուցիչներն անգամ զերծ չեն ժամանաւ կի ազգեցութիւնից և նորա, բոլորն էլ, մեծ մասսամբ տեսդենցիող երկեր են արտազրել և շատ յաճախ, գագարելով գեղարւեստագէտ լինելուց, թեւակոխել են հրապարակախօսութեան սահմանը:

Քառասունական թւականներին և էլ աւելի ուշ Ծուսաստանը երկու կուսակցութեանց կոփւներն էր ապրում: Արևմտեան Եւրոպայից եկած գաղափարներն, այնաեղ յարմար հող գտնելով և սկզբում մի բաւականին գորեղ կուսակցութեան — արևմտականների (Յանձնական) ձգտումներն ու իդէալները դառնալով, անհաշտ կոփւ էին յայտարարել հայրենասէրների յետամնաց հայեացքների գէմ: Արևմտականները, Պետերբուրգում կենտրոնանալով, ձգտում, ջանք էին թափում Ծուսաստանին և մասնակից անել լուսաւոր Եւրոպայի գիտութեան պառուզներին: Իսկ սլավեանասէրների (և այլովանական պատուի անդամների) կուսակցութիւնն ընդհակառակը, արևմտականների ձգտումների մէջ տեսնելով իրենց հայրենիքի կորուսան ու անկումը, մեծ եռանդ էր գործ դնում Ծուսաստանը յետ պահել արևմուտքից եկած հոսանքներից և այդպիսով ապահովել հայրենիքը վերահաս վտանգից¹⁾:

1) Բացի այս երկու կուսակցութիւններից կար նաև երրորդը՝ «Պաշտօնական Ծուսաստան» անումը:

Ահա այսպիսի մի փոթորկում շրջան էր ապրում ծաղկող Ծուսաստանը, երբ Պորպատում (Խւրիե), Լազարեան ձեմարանում և քիչ ուշ Ծուսաստանի այլ և այլ կենտրոններում ուսում և կրթութիւն էին ստանում մի քանի հայ պատանիներ, որոնք շատ հասկանալի պատճառներով չէին կարող չհետաքրքրւել Ծուսաստանի այդ իրարանցմամբ:

Հենց այս ժամանակներում էր, երբ Պետերբուրգի մի քանի հայ ուսանողների մէջ ծնունդ է առնում մայրենի գրականութեամբ գրադւելու միտքը և իր մեծ ոգեսրող ու կառավարողը գըտնում յանձին մի շատ ջանասէր և տոկուն երիտասարդ բանաստեղծի, որն իր բանաստեղծութիւններով այդ խմբակի սիրտն էր կազմում: Դա Մափայէլ Պատկանեանն էր, որին ամենայն վլատանութեամբ Ծուս մայրաքաղաքում հայ տպագրութեան և գրականութեան նախաձեռնողների ու հիմնադիրների պատւաւոր շարքում պիտի զետեղել:

19-րդ դարի երկրորդ կիսի սկզբներում Պետերբուրգում արգէն պատահում ենք հայ թերթի ու տպարանի: Նոյն այդ Մափայէլն էր, որ իր շրջապատի հայ ուժերից ոգեսրուած, նախ տպարանի, ապա նաև լրագրի հիմքն է գնում այնտեղ: Պետերբուրգում Մափայէլն ապրում էր իր, արգէն աշխարհականացած, հօր մօտ, որ քիչ ազգեցութիւն չի ունեցել իր որդու բարոյամտաւոր աշխարհի կազմակերպման վրայ:

Այդ շրջանի պատանիներից մի քանիսին վիճակւած էր հայ գրականութեան սիւներից զառնալ, ուրեմն այսպէս թէ այնպէս իրենց ուրոյն ազգեցութիւնը թողնել մեր գրականութեան վրայ, գրական յիշեալ կոփւների ոգին նաև մեր մէջ մացնելով։ Այս իսկ պատճառով ահա Ռուսաստանի՝ նկարագրուած ուղղութեանց բաշխումն ու կոփւը չէր կարող անհետեանք անցնել նաև մեղնայերիս համար, որ այնքան շուտ և այնքան ինքնատիպ կերպով արձագանք տւեց փոթորկող Ռուսաստանի այդ վէճերին։ Ահա առաջանում են փոքրիկ ընկերակցութիւններ, որոնցից մի քանիսին նպատակն էր անձեռնմխելի պահել հայրենի աւանդութիւններն, իսկ միւսները ձգտում էին, շատ սովորութիւններ ու ազգային ծէսեր անուշագրութեան մատնելով, նոր գաղափարների տարածման համար ոչինչ չխնայել։ Այս խմբակցութիւնները ծնունդ էին հին ու ազգային և նոր ու օտար հայեացքների անհաշտ մրցութեան։ Սոքանոյն իսկ իրենց աֆիցիով օրգաններն ունեցան և իրենց գաղափարներն ասպարիզի վերայ դնելով, մեծ ջանք թափեցին հնարաւորութեան չափւայն ու լայն տարածել դոքա հայ իրականութեան մէջ։

Ռուսաստանում տիրող ուղղութեանց արձագանքն էր այս, որ ըստ մեր պահանջների գունաւորելով իր վէճի առարկան կամաց կամաց փոխեց այնքան, որ վերջը զուտ կրօնական մօ-

տիւներով էին առաջնորդուում իրենց վիճարանութեանց մէջ։

Համսում է իննասունական թւականները, երբ հայ ազգի ինքնուրոյնութեան գաղափարն իր զօրեղ գաղաթնակէտին է համսում։—Իւրաքանչիւը շրջան իր կարիքների և պահանջների ակնոցով է նայում մարդկային ունակութիւնները գնահատելիս կամ որակելիս և պարզ հետեղականութեամբ այժմս պիտի գնահատեին ու արժէքաւոր համարւէին այնպիսի գրւածքներ ու երկեր միայն, որոնք ժամանակի տրամադրութեան արտայայշուչ լինելով, չէին խանգամբում գրականութեան և շրջանում տիրող ձգտումների տենչերի մէջ եղած հարմոնիան։

Ահա հասարակական այս տրամադրութիւնը, տիրող հայեացքներն են պատճառը, որ այս կամ այն մտածողն իր ժամանակակիցներից չի գնահատում և տիրող տրամադրութեան անցումից յետոյ միայն նորա երկերն առաջ են գալիս իրեն արժէքաւոր ու գնահատելի աշխատութիւններ։ Դարեցրջանների այսպիսի շարլոնացող գնահատումներին իրենց ուժի շնորհիւ այնպիսի մարդկանց առաջացման պատճառ են գառնում, որոնք իրենց շրջապատն արտադրելով, աւելի շուտ քառողիչներ, քան գեղարւեստագէտներ են հանդիսանում։ Գեղարւեստագէտ, բառիս իսկական իմաստով, մենք չունինք և համեմատական չափով, յարաբերութեան մէջ դնելով միայն հնարաւորու-

թիւն ունինք մէկին կամ միւսին գեղարւեստագէտ
անւանել, ժխտելով նրանից քարոզի միսիան:
Այս կատեգորիայի տակ կարելի է դնել նաև
Յովհաննէս Յովհաննիսիսին: Առաջ աւելի քան որ
և է մէկը մ'եր բանաստեղծներից, իրաւունք ունի
գեղարւեստագէտ կոչուելու, որովհետեւ ամենից
շատ ու յաջող կերպով սաէ ծառայել «Գեղարւեստը՝
գեղարւեստի համար» դիմին: Յովհաննէս Յովհանն-
նիսիսին այդ գասում գետեղելով, մէնիք բոլո-
րովին միտում չունինք նրանից միանգամայն
ժխտել քարոզի դերն իր տենդենցիով երկերով,
բայց կպնդենք, որ ամենայն իրաւունք նորան
կարելի է յիշեալ ուղղութեան ներկայացուցիչ
համարել մէր մէջ:

Ճիշտ այնպէս, ի՞նչպէս ուռւ գրականութեան
մէջ մետն ու Տիւտչեն են այն փորձաքարերը,
որոնցով հնարաւոր է չափել որ և է ուռւ ընթեր-
ցողի գեղարւեստական ճաշակն, այնպէս էլ հա-
յերիս մէջ Յովհաննիսիսնը պիտի համարւի այն
կրիտերիումը, որով հնարաւոր է հասկանալու
չափել, թէ հայ ընթերցողներից ո՞րն է գե-
ղարւեստի հոգին հասկանալու, գեղարւեստը զնա-
հատելու: Զընդունել Յովհաննիսիսի արժա-
նիքն այդ խնդրում, նշանակում է ժխտել
հայ գրականութեան սահմաններում գեղարւեստի
հետքն անգամ:

Մարգկայն ուղեղի իւրաքանչիւր արտադրու-
թիւն,—ասում է ֆրանսիացի յայտնի գեղագէտը,—

միայն իր միջավայրով կարելի է բացատրել և որևէ
է գեղարւեստական երկ լաւ ըմբռնելու համար
անհրաժեշտ է ստուգապէս պատկերացնել այն
դարեշլջանը, որում առաջ է եկել այդ երկը: Այս
իսկ պատճառով ահա արժէ, լոնէ, մի թուրցիկ
ակնարկ ձգել այն ժամանակի վերայ, երբ ասալ
եկաւ Յ. Յովհաննիսիսնը:

Նա, Մոսկվայում հրատարակած իր երկերով,
հանդէս եկաւ այն ժամանակ, երբ հայ գրական
ասպարէցն, համարեա, գտատրկ էր: Ինչպէս մեզ
յայտնի է, Շահազիզը մի շատ կարճ ժամանակ՝
մի տարի միայն, զրեց: Նա կոչւած չէր բանա-
ստեղծելու: Ժամանակի այլ և այլ պարագաները
ստիպեցին նորան գրիչ վերցնել և այն, ինչ որ
պիտի ասէր քարոզով՝ ուտանաւորով արտայայ-
տեց: Նա ընտրեալ հրապարակախօս էր, ինչու և
երկար բանաստեղծել չէր կարող: 1890 թւին
Շահազիզն երգեց իր կարապի երգը, որում նա
զինաթափ է անում ինքն իրեն և կուի (այլ ոչ
բանաստեղծելու) ասպարէզը յանձնում է մատաղ
սերնդին: Ահա այսպէս հրապարակից հեռացել էր
«երազ»-ի և «ազնիւ ընկեր»-ի հեղինակը, իր
յետնորդներին աւանդ թողնելով «սիրել հայրե-
նիքն անգաւաճան ջերմ սիրով»:

Գամառ Քաթիպան, որ մի ժամանակ հմայել
ու դիւթել էր ամբողջ հայութիւնը, այժմս շատ
ուշ ուշ էր հրապարակ ելնում, իսկ նրա գլուխ
գործոց «Մայր Արաքսի»-ն, որ մի չտեսնեած

ժողովրդականութիւն էր վայելում, նորութիւնը չէր արդէն։ Սպասում էր մի նոր, թարմ երգչի...»

Եւ ահա հիւսիսից գալիս է բանաստեղծութեանց մի փոքրիկ փնջիկ, որ շատ բանով էր տարբերում նախորդներից ու մի նոր հոսանք է մտցնում մեր մէջ։ Այս հոսանքի ուժն ու թափը՝ էին սէրն ու գեղեցկութիւնը, սուզն ու վիշտը, որ ցուրտ հիւսիսից ջերմոտ մեղեղիների մեղմիկ տողերով հնչեցրեց Յովհաննիսեանը։ Այս անգամ էլ մայրենի երկրից չլսւեց ազդի մէծ որդու ձայնը։ 1887 թւին Յովհաննիսեանի ընկերների ջանքերով Մոսկայում հարատարակումէ նրան բանաստեղծութեանց առաջին փոքրիկ ժողովածուն։

Ի՞նչն է այդ ժողովածուի աղն ու համը կազմում... դորա ուղն ու ծուծը հոգեկան ապրումների բազմազան վարիացիաներն են, որոնք ամեն մի ապրող անհատի հոգուն հարազատ ու ընտանի են։ Սակայն բոլոր բանաստեղծութիւններն ի մի են հաւաքւած սիրոյ ու վշտի զօրեղ շեշտովէ ինչպէս մուզիկայի ակկորդները գալիս են գոյն ու վեհութիւն առաջ մելոդիային, այնպէս էլ սէրն ու վիշտն ամենուրեք մի կապ, մի յօդ են հանգիսանում պոէտի բազմերանդ ապրումներն ի մի ձուլելու, մի ամբողջութեան վերածելու։

Յովհաննիսեանը լիրիկ է, ուրեմն և իսկական տէր իր բոլոր զգացումների ու հոգեկան աշխարհի։ և քանի այս կոչմանը նա հաւատարիմ է, միշտ

նորա տողերը խիստ հնչիւն են։ Փորձենք հանել նորա բանաստեղծութիւններից բոլոր լիրիկ երկերն, այն ժամանակ կմնայ մեզ անծանօթ մի բանաստեղծի ստեղծագործութիւն, գոնէ ոչ մեր սիրած, ժողովրդականացած Յովհաննիսեանը։ Եւ քանի նա հարազատ արտագրիչ է իր հոգեկան ապրումների, միշտ էլ անուշ, միշտ էլ քաղցր է հնչում նորա հարմոնիան։

Բայց երբ նա փորձում է դուրս գալ իր բնածին զգացմանց բնագաւառից, մեզ, համարեա, միշտ էլ խորթանում է նորա մուզան և մենք մոռանում ենք մեր ասած սիրոյ ու վշտի դայշլայլողին, գեղեցկի երկրպագողին, սգացող պոէտին։ Իւրաքանչիւր անհատ իր ուրոյն կոչումն ունի կատարելու, որից դուրս գալ և այլ աշխարհ թևակուսելը խիստ դատապարտելի է... Յովհաննիսեանը քնարերգու է, ուրեմն և այլ մոտիւներ երգելու ունակութեամբ օժտւած չէ։ Այս նորա հոգուն օտար մոտիւնները միշտ էլ վտանգ են սպառնում, մի ինչ որ անհարազատութիւն մացնելով նորա լիխտ բնածին սիրոյ, կարեկից ու տենչացող հոգու հնչիւն երկերի մէջ։

Բաւական ինքնատիպ ու բնորոշ միսիայով է Յովհաննիսեանը մեր մէջ հանդէս գալիս։ Ռուս պոէտ նադանի պէս նա էլ վիշտ ու սէր, կարե-

կցութիւն ու գեղեցկութիւն երգելու պատերն է
ստանում

Օ Եր մատադ մուսաս ժպիտն երեսին
Առաջին անգամ ինձ երեսեցաւ,
Նա գեղեցկուրեան, սիրոյ պատկերին
Երկրպագելու ինձ պատեր տու:

Եւ նա երգում էր՝

Նազելի վիւտր կուս սկան սրտի,
Անուշ վայելիներ սիրոյ արքեցման:

Այս տողերն աւելի քան ստոյգ են բնորոշել
Յովհաննիսեանի միսիան ու կոչումը և մինչեւ
Վերջն էլ նա պիտի հաւատարիմ մնար գորան, որը
և խիստ մեծ արժանիք կհամարւէր, բայց նա
Երբեմնակի ակամայից շեղումներ է անում, որով-
հետեւ

Անցան տարիներ, եւ ներին մի
ձայն
Մի նոր նուր վասեց իմ յուզած
նոգում,

ասում է նա: Այդ ձայնը նրան հրաւիրում է
հակառակ չգնալ կեանքին և քանի որ ասպարի-
զում մահառիթ կոիւ է տիրում, նա անհօգու-
թեամբ սիրոյ մեղեղիներ չպիտի հնչեցնէ: Այդ
ձայնը կարծես Պուշկինի վեցթեսան քերովը էն լի-
նի, որ վերածնելով վերջինիս, պատւիրում է
նրան «глаголомъ жги сердца людей». Դժբախ-
տաբար Յովհաննիսեանին չի տրւում այն յայց

մարութիւններն, ինչ որ ոռւս մեծ գեղարւեստա-
գէան է ստանում, որ նախ քան նոր գործունէու-
թեան կոչւելն ամբողջապէս վերածնում է և կա-
տարելութեան համելով, Լերմոնտովի գործի
պէս կարողանում է ասել «Въ очахъ людей читало я

Страницы злобы и порока.»

Մինչեւ Յովհաննիսեանը գործունէութեան
նոր ասպարիզում չի կարողանում Պուշկինի գերը
խաղալ մեր մէջ, որպէսին նոր գործը նորանոր
ունակութիւններ էր պահանջում, սակայն Յովհան-
նիսեանը մնացել էր սիրոյ, թափածի ու գեղեցկու-
թեան նոյն երգիչը:

Օ Տիւփ ժողովածուի ժամանակով առաջին
ոտանաւորը «Իմ հայրենիք տեսել իս, ասա» խո-
րագիր կրող ոտանաւորն է, ուր հայրենիքի ջերմ
կարօնն է այնքան անկեղծութեամբ արտայայտ-
ւած: Հայրենի երկրի ամեն ինչը խիստ գրաւիչ է
նրան և նա մեծ կարօտով է յիշում գոհար խա-
ղողը, սիրաշունչ երկինքը, արտոյտի երգերը,
հարաւոյ դուսարը»:

Եւ զո՞ւ տեսե՞լ ես նոր ա զանձն անգրին,
Դեմքով երեծակ, հասա՞լի վարքամ
Հարաւոյ կուսարի, երապոյրն աշերին.
Երբունն ալ վարդ, մրավիտն անթառում...
Սիրաւանց այրած հնիւու այտերին
Քաղե՞լ ես համբոյր, որ քայցը է մելրից:

Ինքն ըստ ինքեան մեծ թեմայ չէ այս, բայց

գնահատել է իր պարզ զեղումներով, բիւրեղ զգացումներով:

Իրեւ մտածող-պոէտ հանդէս գալով, Յովհաննիսեանը պիտի նախ որոշէր իր առագայ անելիքն ու այն ուղին, որով իր գործունէութեան ընթացքում գնալ կցանկանար: Եւ, յիրաւի, շատ չի անցնում, երբ նրան այդ միտքը զբաղեցնում է նա շուտով գրում է իր «երկու ճանապարհ»-ը, ուր նրա առաջ երկու ուղի է բացւում: Դոցանից մէկը նորան տանում է դէպի բախտաւոր, նուիրական աշխարհը, ուր երկնքից օրննած սիրոյ գարունն է միշտ ծագում և որտեղ նազելի կուսի վառ աշերում նա դրախտավայել վայելչութիւն պիտի գտնի, իսկ միւս ճանապարհը գուրս է բերում մշակող բազկի կարօտ, փշոտ, տատասկոտ անապատ, ուր վարդի փոխարէն փուշ է կանաչում, ուր կեանքը մեռած, ողը խեղդող է... ըստ երեւոյթին շատ պարզ է, թէ ո՞րը պիտի ընտրել այս ճանապարհներից: Սակայն բանաստեղծի արժանիքն էլ հենց դրանում է, որ նա ընտրութիւն անելու մէջ դժւարանում է և վարանած գոչում՝

Եւ ես կանգնած եմ եւ խոր մթածում,
Ուր իմ աննաստատ քայլերս ուղիմ,
Արդեօֆ երկուսից ես ո՞ր բներեմ:

Այսպիսի տատանման ըստէներ խիստ տանձնայտուկ են քիչ թէ շատ աշալուրջ մարդու համար, որ անկարող լինելով տեսակէտա-

ներով միմեանց հետ մրցող հոգեկան երկու ապրումների մէջ ընտրութիւն անել, վարանում, տատանման մէջ է ընկնում:

Իւրաքանչիւր քայլ մարդկային կեանքում որակման երկու տեսակէտ ունի. — նեղ անձնական, ուր ամեն ինչ անհատականի հետ է յարաբերութեան մէջ գրում, ուր դէպքերն ու երեսյթներն անհատական անդորրութեան ու բարօրութեան ակնոցով են դիտում ու գնահատում: Եւ երկրորդ՝ հանուր մարդկային վերացական, որտեղ վերջիններս մասնակի հանգամանքներից, ժամանակից ու տեղից անկախ են քննւում, ուր ամեն ինչ չոր իմացութեան կերտւած պրիզմայով է անցկացւում: Առաջինը գրաւիչ է, հեշտ հասանելի ու շահաւէտ, բայց առօրեայ, մանը, իսկ երկրորդը վիշտ ու հոգսեր նիւթող ու դժւարին, բայց բարձր, վսեմ ու արծէքաւոր: Հոգեկան այս խիստ սովորական ապլումների ընտրութեանն է պատահել Յովհաննիսեանը, ինչու և վարանել է, որովհետեւ աշալուրջ ընտրութիւն է ուղում արած լինել: Մեզնից դեռ շատ առաջ Գիօթէն ասել է «Իմ մէջ միմեանց հետ սերտ միացած երկու ոգիներ կան, որոնք միմեանց հետ անընդհատ կոռում են, դոցանից մէկը լի է սիրով դէպի այս աշխարհը, իսկ միւսը ձգտում է դէպի երկնային իր հայրենիքը»: Պիտի ասել, որ այդ ոգիները միայն նրա մէջ չեն բուն գրելու բոլոր աշալուրջ ու հոգով զարդացած մարդկանց սրտերը դոցա-

բնակարաններն են, դոցանից իւրաքանչիւրը ձգուում է իր հակումներին բաւարութիւն տալուն ծառայեցնել մարդկանց: Վերևում յիշւած որակման երկու տեսակէտների ոգիներն են զոքա, որոնցից մէկը կապում է մեզ մեր անհատական շահերին, իսկ միւսը տանում է դէպէ երկնային իր հայրենիքը—դէպի հանուր մարդկայինը՝ վերացականն ու անպայմանը: Այսպէս ասած, զոքա մեր խղճի մրցող ձայներն են... Ահա այս ձայներն, այս ոգիներն են, որ Յովհաննիսիանի մէջ ևս մտնելով, խանգարում են այն ճանապարհներից մէկն ու մէկի ընտրութիւնը:

Սակայն տոկուն է երիտասարդ բանաստեղծը, որովհետեւ զիանալով հանդերձ, որ առաջին ճանապարհը նորան տանելու է դէպէ երջանկութիւն, իսկ երկրորդն արցունք ու լաց է խոստանում նրան, այսուամենայնիւ նա առաջինը չի ընտրում, որովհետեւ անձնական բարօրութիւնները չեն, առում է նա, որ կեանքի նպատակ են կազմում: Յովհաննիսիանն առաւելութիւնը երկրորդ ճանապարհին է տալիս, որովհետեւ այստեղ զործի, թէկ փշալից, բայց վսիմ ասպարէզ կայ: Վերջնական ընտրութիւնը սակայն չարւեց, չարւեց, որովհետեւ վստահ չէ իր ուժերի վերայ: Ճիշտ է, սա մի բաց, մի պակասաւոր կողմ է Յովհաննիսիանի մէջ, բայց դատապարտելու արժանի չէ հենց նրա համար, որ անկեղծօրէն խոստովանում է, որ ընտրու-

թիւն արողն ինքը չէ, այլ քայքայիչ և շինարար կեանքը, որին և վերապահում է ընտրութիւնը՝

Եւ ես կանգնած եմ եւ խոր
մբածում...
Կեանք, ինձ երկուսից ո՞րն
ես պատրաստում:

Անկախ այս բոլորից պիտի ասել որ Յովհաննիսիանը մեծ հաւատով է կեանք մտնում և ազնիւ ու վսիմ զործի համար պատրաստ է շատ բան զոհելու: Այսպէս է լինում սովորաբար նոր կեանք մտնելիս և հոգեկան խանդավառութեան այս սովորական էտապով պիտի անցնէր մեր երիտասարդ պոէտը: Մեզնից շատերը գուցէ էլ աւելի վառ յոյսերով են կեանք մտել և գուցէ երգել նաև, որ հաւատարիմ կմնան իրենց «Նախկեանքեան» լիդէալին, բայց դաժան կեանքի այլասեռող ճիրանները շատ շուտ են ստիպել ամաչելով յետ վերցնել մեր որոշումները և իրենց թելարածի պէս վարուել:

Կեանքը մի դաժան դեսպոտ է: Որին յաղթահարել շատ քիչ ընտրեալների է յաջողուում: Եւ երջանիկ է նա, ով միշտ կարողանում է բարձր ծածանել այն դրօշը, որի տակ մնալը սկզբից է երգել: Սակայն, ցաւ ի սիրու, պիտի ամենք, որ Յովհաննիսիանն այդ քիչ ընտրեալներից չէ սովորական մահկանացուներիցս միայն նրանով տարբերուում այդ խնդրում, որ կեանք մտնելու

չի արել այն պարզամիտ ուխտը, որից յետոյ ստիլուած լինէր յետ կանգնել:

Գուցէ և նա որեւէ ուխտ-նպատակ ունի, որ շատ հաւանական է, բայց մեղ չի յայտնում: Շատ անգամ սակայն այդ առթիւ ակնարկներ անում է, առանց այդ մեղ պարզելու: Այսպէս նա ասում է՝

Լուզորդի նման ես ծովն բնինում—
Արդեօք միւս ափն ինձ պիտի հանեն
զոս ալիբերք...

Կամ մի այլ տեղ աւելի մեկին է արտայայտում այդ նոյն միտքն, ասելով՝

Իբրև մի նաւորդ ալեաց երեսին
Գնում եմ անյօս, վետրից բնինած...
Եւ պիտի հասնեմ մի օր փարոսին
Կեանի կատաղի հոսանից փրկած:

Այդ փարոսն ու ափն անշուշտ նորա նպատակն է, որի ինչ լինելը մութն է թողնում մեզ: Սակայն փաստն այն է, որ Յովհաննիսեանը ակնյայտնի նպատակ չի դրել իր առաջ և միտումներով թևաւորւած չենք աշխատի, հոգեբանական անալիզի ենթարկելով նրա երկերը, որևէ նպատակ տեսնել նրա առաջ: Այս երկոյթը մի նկատելի բաց է Յովհաննիսեանի գործունէութեան ժէջ:

Այս բոլորից սակայն չպիտի հետեւցնել, թէ չ միանգամայն առանց կոչումի է կեանք մտել,

որովհետեւ ասացինք, թէ նորա մատաղ մուսան ինչ է պատւիրում նրան և նա ինչ է երգում:

Ճիշտն ասած նա իր ինչ լինելը գեղեցիկ կերպով ըմբռնել է և լոկ ֆորմալ սանկցիա չի տել իր երկերում:

Շատ չի անցնում ընդամենը մի տարի միայն, և նրա սրտում հիասթափումն է բուն գնում... Այժմս արդէն տեսչանքով է ուզում համենի այն բոլորին, որոնք արհամարհել ու անարժէք էր համարել իր գործունէութեան սկզբում: Եւ «Ալ տուէք»-ի մէջ նա գրում է՝

Քենու վարդերն ինձ բարձ լինին,
Վառ կանաչից իմ վերմակ,
Նոցա բոյրը զրւարագին
Ծծեմ անվերջ ես անյագ:

Եւ աշագեղ կոյսն ականջիս
Եւր մեղեղին մեղմ հնչէ
Եւ հերարձակ սիրով վզիզ
Փարէ բնեու փաղաքէ...

Ահա ցանկութիւններ, որոնց նա տեսչում է թէկուզ երազով հասնել: Եւ միթէ դա «Երկու ճանապարհ»-ի մէջ նրան ժպտացող հետևեալ գրութիւնը չի, որին չուզեց հասնել.

Անենդ զգում եմ, փարթամ, երջանիկ
Փրլոււելու են իմ կեանի օրեր.
Աշագեղ կոյսը հայեացէ չենադիկ

Պարզեւում է ինձ, եւ սրբանքւեր
Նոնիների տակ այսի գրուխս հանգչի
Նորա մարմարին կուրծին նազելի...

Տեսանք, որ այս կեանքը նա աննպատակ
համարեց, էլ ինչո՞ւ է ապա զդշացել...

Կեանքն է այդպէս տրամադրում մարդկանց:
Նա ստիպում է ոչ միայն հակասութեանց մէջ
ընկնել, այլ նաև շատ ամօթարեր քայլեր անելու
իրականութիւնն ու չոր դատողութիւնները շատ
յաճախ, գուցէ և միշտ, չեն համապատասխանում
միմեանց: Նոքա շատ անգամ իրար բաղխւում,
միմեանցից խուսափում են: Իդէալներն իդէալ-
ներ էլ պիտի մնան և միշտ օդում սաւառնեն. թէ
չէ, երբ իրականութեան մէջ պատւաստուցին,
կփոխն իրենց բնոյթը և կդադարեն իդէալ դառ-
նալուց: Իրականութիւնը, գործնական աշխարհը
իդէալների խորթ հայրենիքն է, որ շատ դժւա-
րութեամբ է նոցա իւր մօտ ընդունում:

Դնալով Յովհաննիսեանի իդէալներով լի,
շատ անգամ կենսուրախ, հոգին մոռայլում, մթա-
զնում է, և կասկածն ու երկմտութիւնը յա-
ճախ անբաժան են դառնում իրարից: Այստեղ
կամաց կամաց փոխում է նրա վերաբերմունքը
դէպի իր շրջապատը: Ամեն ինչ այժմս կասկա-
ծելի է.—և վայելչութիւն խոստացող ճակատա-
գիրը, և շողացող արելը, և կուսի սէրը, և ման-
կական ժպիտը... Այս՝ դէպի միջավայրը քննա-
դատօրէն, աչալուրջ վերաբերելու առաջին սիմպ-

տոնն է, նորա գործնական աշխարհահայեացքի
կազմակերպման ակնյայտնի նշանը: Սա նրա
ինտելեկտի դէպ կայուն վիճակն անցնելու պրո-
ցէսն է, որ գուգագիպում է նրա բանաստեղծա-
կան գործունէութեան առաջին տարիներին: Այս-
տեղ Յովհաննիսեանը դադարում է պառնասի գա-
գաթներում սաւառնելը և աշխարհիկ կեանքին
յարմարուղ իր գործունէութիւնն է սկսում: Սովո-
րաբար այսպէս է լինում մի համոզումից դէպի
միւսն անցնելու ժամանակ: Այս անցման շրջանի
բովանդակութիւնը կասկած է կազմում—կաս-
կած դէպի նախկին ըմբռնումների ճշշ-
մարտութիւնը և կասկած դէպի նոր
գաղափարների սխալ լինելը: Սա տիե-
զերական դատողութեան մի թէօրէայ է, որով
ընթացել և ընթանալու են բոլոր հաստատուն
աշխարհահայեացքի տէր անհատները: Այսպէս է
կազմակերպում մարդկային ինտելեկտը և իր
անխառն ու անթերի գաղափարներն արտադրելու
բարձր ունակութեան համում:

Յովհաննիսեանն էլ կասկածով է սկսել նա-
յել իր ապագայի վերայ. այս պատճառով էլ նա
միայն երազով ու երևակայութեամբ է այժմս
կարողանում թողնել իր մանուկ օրերի նազելի
աշխարհը, ուր ամեն ինչ այնքան հաշտ, բարեկա-
մական աչքով էր նայում նրան:

Հետաքրքիր է, նա գիտմամբ է թողնում
այդ նազելի վայրը, թէ ստիպուած է այդպէս

վարւելու: Անշուշտ վերջին պատճառով: —Նա հոռով գեռ նոյնն է, դեռ նոյն ցանկութիւններն ու տեսչերն են նորա հոգին ալեկոծում՝

Եւ կամենում եմ սեր երգել միայն
Եւ բաղրութիւնը մաքուր հասակի,
Անուռ ժամերը անամպ խնդութեան,
Կենդանի երեւանք կուսական սրբի-
Բայց չի կարողանում, որովհետև

...միշտ ակամայ լարերը բեկբեկ
Տիսուր են հնչում օրհներգը սիրոյ,
Ել չի երեւում ինձ սերը երեկ,
Իբրև վառ զեղմունք երջանիկ հոգւոյ:

Պարզ է, որ սէրն այլիս նրա հոգու վառ
զեղմունք չի հանդիսանում, այլ իբրև նախկին
յուշերի մի բեկոր, որ նորան սէր է երգել տա-
լիս: Հոգեկան այդպիսի մի դրութեան ապրումից
յետ ժամանակւայ արտադրութիւն պիտի համա-
րել Յովհաննիսեանի «Երգ»-ը, որ իսկապես հոգու
վառ զեղմունք չի:

Կեանքք, որպէս պաղատող սրտի հառա-
չանք, նորա ականջին վշտի ու թախծի մեղեղի-
ներ է միշտ փսխում, ինչու և նորա քնարը խոր-
թանում է ուրախ մոտիւնների համար: Կեանքք
պատիրում է՝

«Այնեղ, ուր արցունք, ողբայ եւ աւեր,
Ուր լաւում է լոկ հառաջք լալագին,

Քո բրնարիցը քող ուրախ ձայներ,
Ով քւառ երգից, բրնաւ շլափի...

Իսկ Յովհաննիսեանի գործունէութեան վայրը
հայ իրականութիւնն է, որ արցունքի, շղթայի ու
աւերի հայրենիքն է, ուրեմն և Յովհաննիսեանը
չէր կարող ուրախ ուրախ ձայներ հնչեցնել, որով-
հետեւ այդ չէր համապատասխանում շրջապա-
տում տիրող արամադրութեանը: Եւ յիրաւի՝
Յովհաննիսեանն այլևս չի հնչեցնում գարնան
ցնծալից իր հին մեղեղիները, որովհետև իբրև
հայութեան հարազատ զաւակ պիտի որ միանար
միւսներին և ասէր՝

Ես ել միայն կօծում, միայն հառաջում—
Իմ լացն եմ խաւնում բնիդիանուր ովբին:

Սակայն նա յոյս ունի, որ մի օր այդ հա-
սաչանքին ու լացին վերջ է լինելու, երբ կկարո-
ղանայ, հակառակ բաղդի տնօրինութեան, գտնել
իր ուզածը.

Եւ դեռ անվիատ շարունակում եմ
իմ նանապարհը, դեռ հաւատալով,
Թէ զուցէ մի օր ես գտնում եմ
Այն, ինչ չկամի բաղդը տալ սիրով:
Եւ այս հաւատը նրան երբեմն ուրախա-
ցնում, թարմացնում է:

Մարդկային հոգեկան աշխարհում ամեն մի
փոփոխութիւն անշուշտ իր պատճառներն ունիւ
Դոցանից շատերի պատճառը պիտի արտաքին

աշխարհում որոնել կամ շրջապատի աղղեցութեանը վերագրել: Հոգին իր ձգտումներով երբէք չի սիրում խորթ մնալ տիրող շրջապատին: Նա հարազատանալու, ձուլելու մեծ հակումն ունի: Պատմութեան էւոլուցիայի մէջ դժւար թէ մատնանշւին շրջապատին հակառակ գնացող այնպիսի կայուն և երկարատև ապրումներ, որոնք այսպէս թէ այնպէս հակումն ունեցած ըլինին իրենց զարգացման ընթացքում, մեղմանալով կամ զօրեղանալով, համակերպւել շրջապատի կոլեկտիւ տրամադրութեանը:

Միջավայրն ամբողջապէս փոխում է ու յեղաշրջում մարդուն, և սա շատ յաճախ ստիպւած է լինում թողնել իր անհատական աշխարհի տենչչերն ու ձգտումները և ընդհանուրի տրամադրութեանը յարմարւել: Եւ այս յեղաշրջումը կատարւում է շատ անգամ մեր անհատական կամքից անկախ: Ահա նման հանգամանքների շնորհիւ Յովհաննիսեանը ստիպւած էր հրաժեշտ տալ իր անհոգ լիճակին և շրջապատին համակերպւել:

Մինչ այդ նա ամբողջ ուժգնութեամբ երգում էր համբոյր ու սէր, չքնաղ կոյս, վայելչութեան ժամեր, կուսական սրտի վիշտ: Մինչդեռ շրջապատը իսիստ հակապատկեր էր ներկայացնում: Պարզ է, որ նրա հոգեկան այս բարձր տրամադրութիւնը չէր կարող երկար շարունակւել և վաղ թէ ուշ պիտի համակերպւեր շրջապատին: Պայմաններն այնպէս էին, որ Յովհաննիսեանը

թէկուզ ընազգգարար պիտի հասկանար, որ ժամանակ չէ սէր ու անհոգ բնովեներ երգել այստեղ ուր սուդ ու աւելը, քաղց ու աղքատութիւն է տիրում: Եւ, յիրաւի, նրա անհոգ լինելը երկար չի շարունակում, որովհետև ներքին մի ձայն գալիս է նորան սթափեցնելու և յայտնելու:

Սրոյ գրաբնութեան մեղեղիների
ժամանակ չէ, ով անհոգ երգիւ.

Գնալով այս զգացումն այնքան է զօրեղանում, որ բանաստեղծը կարիք է զգում իր նախկին մոտիւներին վերջնականապէս հրաժեշտ տալ, որովհետև նրա վրայ ինչպէս կապար ծանրանում է կեանքի պիտոյքը մարդկանց չարութեան և նա գրում է:

Մընակ բարով արեւ, զարոն
Եւ խնկաբոյց ծաղիկներ,
Կարկաչանոս կտակ սիրուն,
Կանաչազգես բլուրներ.

Մնակ բարով, համբոյց եւ սէր,
Դեմքով հրեւտակ կոյս չինալ,
Վայելչութեան պայծառ ժամեր,
Քաղցր ժայիս, կեանք մատաղ...

Այս հրաժեշտով նա մի ներգաշնակութիւն է առաջացնում շրջապատի ու իր երգածների մէջ և իր քնարը նւիրում է վիշտ ու տանջանք, լաց ու հառաջանք երգելու.

Աղքատուրիւն ես սիրեցի,
Խեղինի լացը, հառաջան,
Ես բնարս նրկրեցի
Վիշ երգելու եւ տանջան:

Այսպիսով նա միանգամայն յեղաշըջում է
և երդում այլես ուրախ ու զւարթ երգ չերգել,
որովհետեւ ըրջապատը սգացող է.

Ես կփերեմ բնարն ոսկի,
Թէ որ երա լարերից
Երջանկուրեան, ուրախ երգի
Թուշեն ձայներ ոգելից:

Բայց մինչ ե՞րբ պիտի այսպէս ողբար.

Մենք պիտ ողբան մինչեւ բացովի
Անամպ երկինք նոր գարեան
Սուրբ հայրենեաց նորոգ կեանիի
Մկրտուրեան Յօրդանան...

Հստ երկոյթին Յովհաննիսեանը բաւականու-
թեամբ չի բաժանում արդէն հրաժեշտ տւած իր
մոտիւներից, որոնք, ինչպէս երկում է, նրա հո-
գու բնածին էլեմենտներն են կազմում և այն
հրաժեշտը լոկ ակամայից է տւել. և ահա թէ
ինչու՝

Տեսնում ես ուրօդդ կարիք եւ գրկանիք
Եւ ուրկուրեան ննող ողբաներ.
Եղբարքը, կեանիից չտեսած զգւանիք
Վաղ նաւակել են նոգեմաւ ցաւեր:

Եւ պարզ է, որ շրջապատի այս դրութիւնը
նոյն իսկ նրա յանկութեան հակառակ կստիպէք
նրան այլ լինել. քան որ ինքն էր ուզում և Յովի-
հաննիսեանը, եթէ կամենար էր, չէր կարող այդ
տրամադրութեանը հակառակ դիրք բռնել. և
յիրաւի՝

Զես կարողանում էնքուտ մատներով
Ոգեւորուրեան երջանիկ ժամում,
Գիպչել յարերին, թէ նլու էնարով
Երգելու լինիս մի անհոգ խնդում:
Իսկ որ այդ անհոգ խնդումը նրա հարազատ
ապրումն է, երեսում է նրանից, որ նա զայրանում
է, երբ իր այդ զգացումին համակիր խօսք ասող
չկայ:

Որ նա այն հրաժեշտը ստիպւած է տալիս,
երեսում է նրանից, որ բանաստեղծը հոգով դեռ
կապւած է իր հրաժեշտ տւած մոտիւների հետ
և նոյն իսկ այն աստիճան կարիք է զգում իր նախ-
կին ապրումների դարձին, որ թէկուզ հրաշքով
ուզում է յետ բերել այն կրակը, որ մանկութեան
օրերին ունէր:

Բայց եթէ կայ յիրաւի
Հրամ ասածն աշխարհում,
Եւ հրաւով կփառւի
Հանգած կրակն իմ հոգում,
Կամրացնեմ ես երան
Ինչպէս մի բերդ անառիկ...

իմանալով հանդերձ, որ նոցա գալուստն իր համար մի պատրանք է, դարձեալ ցանկանում է այդ յոյսով ոգևորւել և շրջապատից լսել, թէ վաղ կամ ուշ նոքա դառնալու են:

Խաբիր ինձ դարձեալ տեղ ցնորդով,

Թէ ծով-ծով աչերն աննման կուսին
Սիրտ անուշ տենչով դեռ յուզեն պիտի...

Մի քանի անգամ առիթ ենք ունեցել ընդունելու, որ Յովհանիսեանը խիստ մեծ նշանակութիւն է տալիս շրջապատի տրամադրութեանը և սեփական վճռականութեան ոգին շատ թոյլ է նրա մէջ: Յաճախակի նկատել ենք, որ նա փոխանակ իր ուժերով մաքառելու այս կամ այն երեսյթի դէմ, բազգին ու ճակատագրին է թողել երեսյթի դէմ, որ խիստ ջերմ հաւատ ունի նա այդ... երեսում է, որ խիստ ջերմ հաւատ ունի նա դէպի նախախնամութեան հուժկու և շատ բաներ տնօրինող ուժը: Որքան էլ համակրանքով ու ակնածութեամբ նայելու լինինք Յովհաննիսեանի տաղանդին, այսուամենայնիւ չենք կարող չնկատել, որ դա մի պակասաւոր կողմն է նրա մէջ:

Սակայն ո՞վ է նրան ստիպում անել ու երգել այն, ինչ չի ուզում: Միթէ լոելն աւելի լաւ չէ, քան ակամայից հրապարակ ենելը: Բայց նա լոել չի կարողանում, որովհետև նրա այնքան զգայուն սիրտը, անծայր չարիքը տեսնելով, կըտրասւմ է. յուսահատութիւնը, լացն ու հառաչը

նրան մաշում են, և նա զգում է, որ «յանցանք է լոել, երբ այսչափ մեծ է և անծայր չարիք»:

Այս նորանոր երեսյթները քիչ քիչ կորցնում, անհետացնում են կեանքի այն բոլոր գրաւչութիւնները, որոնք մի ժամանակ նրա վառ յոյսերի աղիւրն էին: Եւ միշտ էլ, երբ բանաստեղծը հնարաւորութիւն է ունենում կետրոնանալու և մի աչալուրջ բաղդատութիւն անելու իր ներկայ ու անցեալ կեանքի մէջ, միանգամայն այլ պատկեր է՝ տեսնում:

Աշխարհի աղմուկից հեռու մտածելիս, նա միշտ էլ նոյն հարցն է ամախ իր այն գրեթեին, որոնցով յոյս ուներ կեանքի խորհուրդը գտնելու:

«Ուշ է ձեր նախկին երազոյր բովչական,
Ուշ զալտնիկը ձեր սփոփիչ զօրութեան...»

— Հարցնում է նա, սակայն դոքա, որ մի ժամանակ շատ խօսուն էին և ամեն ինչ խօստանում էին նորան, այժմս լուս են և անզօր՝ որևէ է ճանապարհ ցոյց տալու, ինչու և կեանքը նորա համար դարձեալ մի մուեթն ու անմեկին խորհուրդ է: Բայց բաւական չի, որ կեանքը մի խաւար գիշերի է նման, այլ և զայթակղեցնող է ու չարժ որովհետև

Ուպէս մի սիրեն կախարդում է մեզ

Ու բունաւորում մի նենց օձի պէս:

Սակայն միայն դոքա չեն, որ ընոյթը փոխած են պատկերանում նրան... կեանքում ուրիշ երեսյթներ ևս այդպէս են հանդէս գալիս:

ինչու այդքան երերուն, այդքան անկայուն է կեանքը... Միթէ այդ պրոցէսի մէջ մի տնօրինող՝ մի կառավարող ձեռք կայ, որ մարդկանց տանչելու, և յուսահատեցնելու համար, նախ լաւ ու գեղեցիկ է ցոյց տալիս ամեն ինչ, իսկ յետոյ բնոյթը փոխում, այլասեռում է... Պիտի նկատել, որ կեանքը բնաւ փոփոխուող, բնաւ անկայուն ու երերուն չէ: Նա միշտ էլ գնացել ու գնում է մի և որոշ դէպի տիեզերական մեծ նպատակը տանող ճանապարհով: Մարդիկ են միայն, որ զանազան միտումներով ու սեփական նպատակայարմարութեամբ են բարուրում նրան: Իւրաքանչիւր անհատ՝ աշխարհ գալով, հաւակնութիւն ունի որ և է այլ բան անել, քան որ հնարաւոր է կեանքի իշխանութեան սահմաններում, ամեն ոք ուղում է իր ուժերն հակադրել կեանքի նորմալ ընթացքին և մի նոր ուրոյն բան անել... Այս պարագաների շնորհիւ է, որ առաջանում է մեղ հանրածանօթ ի դէալական աշխարհի գոյութիւնը, որն իսկապէս ոչինչ է, եթէ ոչ ոչալ, իրական աշխարհին ֆիկտիւ, կեղծ աշխարհ հակադրելը: Ըստ այսմ պարզ է ուրեմն, թէ ինչու իւրաքանչիւր անհատ երիտասարդ հասակում, երբ նա դեռ ընդունակ չէ կեանքի ստոյդ բնոյթը նկատելու և ըմբռնելու, աւելի իդէալական, աւելի երազող՝—ուրեմն և աւելի անհաստատ ու երերուն հողի վերայ է կանգնած, քան մեծ հասունացած հասակում, երբ կեանքի բովից անցնելով չի կա-

բող չնկատել, որ իր ընդունածները խիստ բաղեւում են իրականութեանը: Ահա այն բուն պատճառը, որ մարդկանց աւելի գիտակից հասակում ծնում, առաջացնում է յոռետես բովէներ, յուսահատութեան ժամեր, հիսութափութիւն, կեանքի ձանձրոյթ, որոնք գնալով աւելի ու աւելի թանձրանում են ու հիծում մարդու:

Նոյն այս երեսոյթին ենք պատահում նաև Յովհաննիսեանի կեանքում: Մատաղ հասակի վարդագոյն պատկերներն այլ ևս չեն երեսում նրան և գարնան ցնծալից մեղեդիներն այլևս չեն հնչում: Ինչու գնալով մթագնում է ապագան և գալիս են յոռետեսութեան ժամեր: Այսու ամենայնիւ պիտի ասել, որ մեր բանաստեղծներից ամենից շատ կենսունակութիւն Յովհաննիսեանն ունի. Իւրաքանչիւր գառնագին բովէից յետոյ նորամէջ էլի վառ է մնում այն յոյսը, թէ ապագան կրաքելաւուի: Այդպիսի շատ բովէներից յետոյ կենսուրախ յոյսեր են բարուրում նրան և այս կողմից նա խիստ աննկուն է:

Զգիտեմ ինչո՞ւ, երբ մառախլապատկիսուած է եւկրեմ, եւ սրտիս վերան Վիտ է ծանրանում, եւ մինչ յուսանա Տեսնում եմ մրրիկ ցրաւունչ ձմրան,— Ես երազում եմ մի չենազ գարուն. Ոսկի արեւով, եւ զերմ, եւ պայծառ, Կանաչ գաւօրայի, լեռներ զարդարուն, Վասկն առաջիս վեիս ու կայտառ:

Տարերքի դաժանութիւններից նա չի վախենում կամ յուսահատւում, այլ ընդհակառակը՝ հենց այսպիսի բոպէներին նրա մէջ այն միտքն է ծնում, թէ շուտով գորան հակապատկեր մի դրութիւն է գալու, երբ ոսկի ու չերմ արևով լուսաւորւած կայտառ ու վճիտ գետակն է խոխոջելու։ Նորա յոյսը դէպ երջանիկ ապագան, նորա կենսունակութիւնը խիստ աչքի է զարնւում։ Թէկուզ այսօր մութն է արև, թէկուզ բաղդը խորթ մօր պէս դառը թունով լի կեանքի բաժակն է առաջարկում նորան, բայց էլի նորա մէջ ամուր ու հաստատ է այն յոյսը, որ վերջ ի վերջոյ կգայ մի օր, երբ կցոլայ վառ արշալոյսը և անցեալից առաջածած, նա ոգեսորութեան արցունքներ կհոսեցնէ։

Ասենք այստեղ ոչ այնքան նրա հաւատն ու յոյսն են գիր խաղում, որքան նրա հասկացողութիւնն ու զիտակցութիւնը։ Որ այդ մառախուզն էլ, յուսահատութիւնն էլ, մըրիկն էլ կանցնեն, դոցա ոչ այնքան նա հաւատում է, որքան զիտակցում, որ հենց այդպէս էլ պիտի լինին։ Յովհաննիսեանի ներքին համոզումն է, որ ամեն ինչ անպատճառ անցնելու է։

Թէ չար, թէ բարի, խինդ թէ վիշտ անել՝
Կանցնեն զերդ երազ, ինչպէս ամեն բան...

Ոչինչ ընութեան մէջ կայուն ու յարատեչ. ամեն ինչ աւերի ու մոռացութեան զո՞ն է, Նոյն իսկ մեր էութիւնն էլ բնութեան մի ծաղը է.

Ողջը լոկ ծաղը և անսիրտ բնութեան
եւ սեր, եւ հրեւանք, նամայն զեղեցիկ
Զոհ և աւերի եւ մոռացութեան։

Եւ այսպէս խարուսիկ է ոչ միայն զրսի աշխարհը,
այլ և մեր դատողութեան ու մտքի ողջ ստեղծագործածը։

Եւ այն բոլոր, ինչ ինքնահաւան
Ստեղծում է միտքը վառւած, բորբոխած,
Զեանալու և ուս ծխի նըման։

Կեանքն էլ անկայուն հոսուն է ամեն բանի
նման։ Իսկ ինքն ըստ ինքեան ինչ է կեանքը։ — հոգու զրական ու բացասական ապրումների մի խառնուրդ։ Սէրն ու ատելութիւնը, կասկածն ու հաւատը՝ միախանուելով, կեանքի առաջացման պատճառ են դառել։ Եւ պարզ է, որ կեանքի անվերջ սլացումը տեսնելուց և դորա դադարման կէտը չիմանալուց յետոյ, նա պիտի հրաժարէր նրանից, հետաքրքւելով միայն, թէ ուր են թըռչում նրա սրբնթաց ալիքները։

Կեանքը դատարկ է և նրա վայելքները միայն տհաս պատանու զառանցանք կարող են լինել։ Իսկ աշալուրջ անձը պիտի հասկանայ, որ նա երերուն է, նա անհաստատ է, ամեն ինչ քայլայում է։

Ուպէս մի անուրջ դու պիտի սնցնես,
Լոկ ունայն տելք յուզելով արիւն.
Ամեն բաղցր իոկ դու պիտի տանես
Սնիոզ բերկրութիւն. եւ սեր, եւ աւիւն։

Ուրեմն ի՞նչ:—Միթէ կեանքն ու բնութիւնը նոյնանում են... Տեսանք, որ ամեն ինչ և ոչը և հրճւանք բնութեան ծաղըն էր, իսկ այժմս էլ կեանքն է ամեն ինչ ոչնչացնում: Այսպիսով մի նոր միութիւն՝ մի նոր պանթէիզմ է առաջացնում Յովհաննիսեանը, ուր ոչ թէ Աստւած ու բնութիւնն այլ կեանքն ու բնութիւնն են ձուլում, միախառնում: Ամենազօր բնութիւնը նոյնանում է ամենապարփակ կեանքին: Եթէ ինկատի առնենք փիլիսոփայական այն դատելակերպը, ըստ որի բնութիւնն՝ արտաքին աշխարհը, լոկ մարդկային հոգու պատկերացրածն ու երեակայածն է և ոչ ոչալ զոյութիւն ունեցող մի բան, ապա ուրեմն պիտի միանանք Յովհաննիսեանի առաջ բերած այս նոր պանթէիզմին, միանգամայն խոհական համարելով այն:

Բայց էլ ինչու ապրել երբ կեանքում ոչինչ չկայ, երբ ամեն ինչ դատարկ, ամեն ինչ ունայն է: Եւ ահա բանաստեղծին մի ապատիա է համակում.

Կորցնելու բան չունեմ,

Ոչ գտնելու ել մի յոյս.

Մեկ ե ուր ել որ լինիմ,

Մեկ ե ինձ համար մութն ու լոյս:

Սկեպտիկների ձգտման կէտին է հասել Յովհաննիսեանը և հոգեկան այս ատարաքսիայի ժամանակ նրան այլևս ոչինչ չի ազդում:

Բայց այսպիսի կեանքը մահից էլ վատ է,

որովհետեւ կեանքի բոլոր քաղցրութիւններն ու թովչութիւններն չեղոքացած են և բացարձակ ամայութիւն է տիրում: Եւ քանի որ բանաստեղծը շարունակում է ապրիլ, ապա ուրեմն պիտի մի նոր յոյս գտնի, գոնէ ստեղծի:

Հաւատում ենք, թէ կրօպայ մի օր—
Բաղդը երազ չի բախ մեզ,

Թէ կբացւի նոր փառաւոր

Առաւօտեան վառ օռի պէս:

Եւ այս հաւատը նորան կենսունակութիւն է շնորհում:

Ասացինք, որ գնալով աւելի մելամաղձոտ, աւելի կասկածոտ է զառնում նա դէպի կեանքը: Բայց ինչու, ինչու, երբ ըստ ինքեան ոչինչ փոխւած, ոչինչ խանգարած չէ բնութեան մէջ:—Արտաքին երևյթներն այնքան մտատանջութիւն չեն պատճառում նրան, որքան ներքին ապրումներն, հոգոն ու վիշտը:

Լուսնակ գիշեր, անելոն գիշեր
Դարդերիս հետ ես եմ մենակ

Սեւ երազներ, սեւ սեւ յուշեր

Հոգիս արին աւերակ:

Ի՞նչ կայ աւելի քայքայիչ, աւելի անմիխթարական, քան անցեալի սկ սկ յուշերը, որոնք ուղղելու մարդ ոչ մի հնար չունի... Բայց այդ գեռ բոլորը չէ... Նորա անկեղծ խօսքերը թշնամական վերաբերմունք են գտնում շրջապատից,

ինչու և նա որոշում է այլևս ոչ ոքի առաջ չբար-
նալ իր սիրտը:

Ում որ եղբայր անւանեցի,

Ինձ թենամի իմացաւ.

Եւ ես ամուր պատանեցի

Շիրիմ սրտում իմ սեւ ցաւ:

Պարզ է, որ այս դէպքում, երբ նորա ցա-
ւերը ոչ ոք չի ուզում ամոքել, պիտի զարդը նո-
րա կեանքի անբաժան ընկերը գառնար: Շրջա-
պատից այսպիսի անբարեացակամ վերաբերմունք
տեսնելով, ընականաբար բանաստեղծն ամեն
ջանք պիտի թափէր ամփոփւել ինքն իր մէջ և
ոչ ոքի հաղորդել իր դարդերը, որովհետև միե-
նոյնն է զնահատելու չին:

Լուռ կաց, օիրս իմ, այս աշխարհում
Դարդ իմացող չես զտեիր.

Մեզ պիտիներին ջուրն է բերում,
Ջուրն էլ մի օր կը տանի:

Յովհաննիսւանի հասարակական իդէալն
աւելի սիրառատ ու ցայտուն է գառնում, երբ նա
թեակոխում է քրտնաթոր աշխատանքի աշխարհը,
ուր ամեն ոք իր մաքուր քրտինքի արժանի վաս-
տակն է սպասում, առանց որի նա կորած է: Հայ
գիւղացիութեան այս ամենագարդու կողմը վե-
րաբրտաղող բանաստեղծութիւններ մենք շատ
սահմանափակ թւով ունինք:
Բանաստեղծը հմտօքէն է մի

վոքրիկ պատկերով տալ հայ գեղջուկի կրօնաբա-
րոյական ամբողջ աշխարհանայեացքը և նրա տըն-
տեսական բարութեան ամենամեծ խթանը: Գիւ-
ղացու աշխատանքի թագուհին հողն է, հողն է, որ
պիտի ծնի, բազմացնի նրա կամ հոգսերն ու դար-
դերը, կամ երջանկութիւնն ու բարեկեցութիւնը:

Աստւած էլ պիտի բարեհաճ և սիրալիր վե-
րաբերւի գէպի գիւղացին, եթէ ոչ՝ նրա արտը չի
կարող կերակրել նրան. իսկ այս կախւած է վեր-
ջինիս վարած կեանքից: Ահա այս պատճառով նա
գոհաբերելու կարիք է զգում:

Եւ չերմ այօրքով Տիրամօր առջեւ

Ես մոմ կվառեմ, ես խունկ կծխեմ,

Որ ենց պարգեւի մի առատ անձրեւ,

Որ ենց միօտ օիրով նայէ խնդադեմ:

Գիւղացին ենթագրում է, որ գուցէ իր շատ մեղ-
քերը չներւեն, ինչու և պիտի նոր միջոցի գիմէ,
որպէսզի սովամահ չլինի: Ահա սորա համար նա
գիտէ նաև իր ուժերին գիմել՝ սրտին կենդանու-
թիւն տալու:

Բայց քէ այդ շնորհին մեղերիս համար

Արժանի չլինիմ, ծով կը դարձնեմ

Ես տաք երժիներ նակիս արեւառ,

Որ ենց, իմ հատիկ, ծարաւ չբողնեմ:

Երեսում է, թէ ինչ նախւ համոզումն ունի մեր
գիւղացին Աստուծոյ կարողութեան սահմանի մա-
սին: Նրա կարողութեան սահմանը վերջանում է

այնտեղ, որ գիւղացին իր ուժերին է դիմում։ Սկզբում վերջինս աղաչում է նրան, իսկ հակառակ դէպքում, առանց նրան էլ կկարողանայ ջրել իր արտը։

Հայ գիւղացին միշտ էլ տանջւել ու կեղեք-ւել է զանազան անձերից-աղաներից, որոնք օրն իրուն հարստահարելու մասին են մտածում։ Թէև իսկապէս ճորտութիւն չկայ մեզնում, բայց փողաշէր աղայի և պարտապան գիւղացու մէջ եղած յարաբերութիւնն յաճախ աւելի վատթար ու կեղեքող է, քան կլինէր ճորտատիրութեան ժամանակ։

Էզուց ելի աղան կը գայ.

Նրա սիրտը միւս անկրօնում

էլ ամպի պէս սիմտի գոռայ.

«Նուսով, Գրիգոր, Փաղերը բե՛ր.

Ելի չկա՞յ, կովդ հաեֆ...»

Ախ, նազլու զան; այնի՞նչ բան իր,

Մի՞սդ է հերու, Տե՛ր, Դու փրկի։

Հոգեկան այսպիսի բազմերանգ մոտիւներն յեղեղելով, ըստ երկոյթին Յովհաննիսեանն իր անհատական հոգու ամենաբնածին ու յարատեապրումը չի բոլորում և վերջը միայն վերջնականապէս դորան է դառնում։ Սա մեզ վաղեմի ծանօթ նրա կասկածն է. . . Կասկածը նորա հո-

գում ծնած նոր էլեմենտ չէ. այդ եղել է բանաստեղծի մէջ գեռ պատաճի հասակում և զնալով լոկ զօրեղացել, ընդլայնել ու կայուն վիճակի է հասել։

Կասկածը՝ դէպի կեանքի բարօր ապագան, Յովհաննիսեանի հոգու ամենասկզբնական ու կայուն ապրումներից միակն է, որ սև ժամալւէնի պէս անցնում է նրա սկսնակ երկերից մինչև ամենավերջինն այդ տեսակէտից խիստ կատարելութեան հասած ոտանաւորը։ Բանաստեղծին, եթէ յաջողւել է մի ուրոյն ամբողջացած աշխարհահայեցք տալ իր լիրիկ երկրում, դա եղել է իր այդ հաստատուն ապրումի-կասկածի շնորհիւ։

Դիտենք նրա ամենաառաջին երկերից մինչև ամենավերջինը. միշտ և ամենուրէք հանդիպում ենք խիստ ընդգծւած ու շեշտւած կասկածի ու կեանքից խուսափելուն... Մի տարբերութիւն, որ կայ՝ դա հետեւեալն է. — մինչդեռ իր բանաստեղծութեանց սկզբում Յովհաննիսեանն այդ երգել է լոկ իրու մի զգացում-մի ցանկութիւն, վերջը նադորան ձգտում է իրու մի խոճական և ինտելեկտուալ նպատակի։

Այս խնդրում Յովհաննիսեանը հասել է իր նպատակին և պիտի սպասել, որ նա դադարի որոնումներից և հանգիստ ու անդորր զգայ իրեն։ Եւ ահա սա մի շատ անմիիթար դրութիւն պիտի համարել Յովհաննիսեանի համար, որովհետև գեղարւեստագէտի համար «ամենաերկիւղալին հան-

գստանալն է։ Հասնել ձշմարտութեան և թողնել
փնտրելը—կնշանակի դադարել գեղարւեստագէտ
լինելուց»⁴⁾։

Այժմ տեսնենք, թէ ինչո՞ւ ենք Յովհաննիւ
սեանին այդ գտանգին ենթակայ համարում։

Վերջերս լոյս տեսած մի ոտանաւորի մէջ
նա, յեղյեղելով իր փայփայած այդ մոտիւը, ահա
այսպէս է բոլորում իր տեսչերը։

Կամ սիրով արբեխ, ինչպէս պատանին
Մատաղ սիրուհու գրկումը անուշ,
Գրլուխս դրած երկրի չերմ կրծին
Իւր հետ յութիսան բուն լինել անյուշ…

Նորութիւն է սա բանաստեղծի ապրումների
մէջ, թէ մի նոր էտապ նորա հին տենչերի։ Սնա-
շուշա վերջինս։ Եւ ինչո՞վ է տարբերում նրա այս
բանաստեղծութիւնը նախկին մի այլ ոտանաւո-
րից, որ այսպէս է սկսում։

Այս, ուեկ ինձ քաղցր մի բուն
Կեսնից հեռու պանամ…

Եթէ աւելացնենք, որ այստեղ բանաստեղծի
համար դեռ պարզ չէ եղել, թէ վերջնականապէս
ուր է ուզում պանալ, կընդունենք նաև, որ այդ
ոտանաւորը մի լրացումն է, մի բոլորւած ու ե-
զերւած ամբողջութիւն է «Ախ տւէք»-ի։

4) Էրապի творчества

Այս վերջին ոտանաւորի աւելի քան անորոշ
ձգտումը որոշակիութիւն է ոտանում հետեւեալ
ոտանաւորի մէջ, որ աւելորդ չենք համարում մէջ
բերել։

Մենակ, միտք մենասկ.—ի՞նչ երջանկութիւն։

Մի գերեւուային բերկուրեամբ լցւած

Լուս եմ մարող սրբս բարախիւն,

Համարում ամեն մի վարկեանն անցած։

Հեռու աշխարհի անմիտ ժխորից,

Ամեն խոռվայոյ կրեւրից ազատ,

Վօժիս անձնատուր ու անցաւակից

Փայփայում եմ իմ տենչերն հարազատ։

Ո՞հ, ի՞նչ անպատում հոգեզմայլուրեամբ

Երազում եմ ես, այսպէս միանակ

Իբրև երկնային մի մոլար զինջ ամպ

Ցնիդել երկնեամ անհուն կապուտակ։

Ինչպէս ձիւն մահուր լեռան գագարին

Արեւի սողից հալուել կուզեկի,

Մարգեր սոյելափ անցնել մեղմուգին

Ինչպէս սօսափիւն գարնան զեփիւռի։

Եթէ նոյնիսկ ամեն մի տուն առանձին ա-
ռանձին վերցնելու լինինք, կնկատենք, որ ամեն-
ուրեք միանոյն տեսն է նորան զբաղեցնում։ —
անէանալ միայնութեան մէջ։

Ասացինք, որ այս մի նորութիւն չի Յովհան-
նիսեանի մէջ, որովհետեւ մի շատ յարանման մո-
տիւ ու արտադրութիւն ունի դեռ շատ առաջ, ուր
խիստ պարզ ու մեկին նոյն միտքն ու ձգտում-

Ներն են նորան մտատանչում: Այստեղ այլ և այլ պարագաներից ու դրդապատճառներից յետոյ, նա ասում է՝

Քո ծոցն եմ ձգտում, ո'վ մայր—բնուրին,
Կամիմ հալուրդիլ բո լուռ հանգստեան
Վսեմ խորհրդին.

Ապա շարունակում

Եւ գիրկդ եմ ընկնում, հոգիս անիտով.
Քեզ կամիմ միանալ, ով մայր բնուրին.

Սակայն մեծ տարբերութիւն կայ սորա և
Նախկին բանաստեղծութեան մէջ: Այդ տարբերու-
թիւնն ակնայայտնի կդառնայ, եթէ ինկատի առ-
նենք այն բոլոր շարժառիթներն ու նպատակը,
որոնցից ծնունդ են առել այս վերջերս գրած-
ուանաւորը և սորա նախատիպը—«Աշուն»-ը:

Ահա թէ ինչ.—մինչեւ «Աշունը» վարձա-
տրութեան, ապագայում ցանկալի դրութեան հաս-
նելու յոյսով է համակւած և ընութեան հարա-
նման պլոցէմն իր առաջացման պայման ունի՝ չէ
կը գայ գարուն—կրկին, կփայլիս ժպտով մանկա-
կան..., կամ քիչ յետոյ՝

Զգում եմ բերկրած, գարունի յիշելով,
Որ այդ ցնորդ չե, կայ անմանութիւն.

Վերջին բանաստեղծութիւնը հոգեկան կայուն
հակումների, ներքին խոր համոզման ծնունդ է—
մի էական կէտ, որը միանգամայն բացակայում
է «Աշուն» մէջ, որն, ինչպէս ասացինք, արտա-

Երկոյթների և դոցանով շախկապուած մտորում-
ների ու ցանկալի դրութեան առաջացումն է:

Եւ «Աշուն» միջի բոպէական այն ապրում-
ները գնալով հիմնաւորւում են Յովհանիսեանի
մէջ և եղերելով նրա տենչերը վերջակէտ են դը-
նում նորա որոնումներին: Արդեօք սորանով Յով-
հանիսեանը երգեց իր կարապի երգը:

* *

Մարդկային հոգեկան աշխարհի ամենազօրեղ
և միենոյն ժամանակ ամենասովորական ու ան-
բաժան էլեմենտներից է սիրոյ զգացումը: Սէրն
ապրում է ժողովրդների ու մարդկանց մէջ ան-
ընդհատ, ունենալով, իհարկէ, իր զարգացման որոշ
ու տարբեր աստիճաններն ու գունաւորումները:
Ինչպէս ամեն մի անհատի, նոյնպէս և ամեն մի
ժողովրդի հոգեկան աշխարհն այս կամ այն ժա-
մանակամիջոցում հակւած է լինում հոգեկան
որևէ ուրախ կամ թախծոտ ապրումի, որը գա-
րերջանի ու միջավայրի անլայման ծնունդ պի-
տի համարել: Այդ, ապրումներն իւրաքանչիւր
անհատի համար անպայման կարող են գոյութիւն-
չունենալ:

Հոգեկան այդ ապրումներից ամենասովորա-
կանն է սէրը, որով բռնկւում է, համարեա, ամեն
մի անհատ: Սէրը տարբեր գունաւորումներով ու
զանազան էտապներով շարունակ ապրում է, ապ-

բում է քանի գոյութիւն ունի մարդկային կեանքը: Ինչպէս մեռնում են մարդիկ, բայց մարդկութիւնն, անկախ իր կազմիչ տարրից, շարունակում է ապրել, ճիշտ այդպէս էլ անհետանում է սէրը, բայց ոիրոյ զգացումը միշտ էլ անանջատ, անբաժան է մարդկային ապրումների մէջ:

Սիրոյ տարբեր աստիճաններն ու տարբեր գունաւորմանց զանազանակերպ արտայայտութիւնները կախւած են ընդհանրապէս մարդուս տարիքից, իսկ մասնաւորապէս նրա տեմպերամենտից, կրթութիւնից, զարգացումից և միջավայրից: Անհատի տարիքի մեծանալով, սէրը փոխում է իր խարակտէրը, դադարում է նախկին փոթորկութ, անհանգիստ ընոյիթ ունենալուց և, կարծես մարդուս գիտակցութեան հետ համակերպւելով, աւելի խոհական ու աչալուրջ է դառնում ու դէպի խելացի ու արժէքաւոր գործերը տանելու մեծ մղիչ հանդիսանում: Համարեա չկայ մի անհատ, որի կհանքի այս կամ այն շրջանում սէրն հանդիսացած չլինի նորա հոգեկան ապրումների զօրեղ անօրէնը:

Սիրոյ գունաւորումներից ամենասովորականն է սէր դէպի կինը, որ թէն կարճ ժամանակով, բայց ամենազօրեղ, զուցէ և ամենավտանգաւոր, զգացումն է մեր մէջ: Այս սէրն ուղիղ յարաբերական է մարդկային ֆիզիքական զարգացմանը, որի ամենածաղկեալ շրջանը մինոյն

ժամանակ սիրոյ ամենավտանգաւոր ժամանակամիջոցն է, երբ այդ զգացումն իր զագաթնաշկտին է հասնում: Որից յետոյ քիչ քիչ դէպի անկումն ու մոռացումն է դիմում:

Խօսել թէ ինչ է այս սէրը, կնշանակի ընկնել տարտամ բնազանցութեան անկայուն և հնաթաղրական դատողութեանց մէջ: Սիրոյ բնորոշումը, մեզ թւում է, ոչ ոքի ստուգապէս տալ չի յաջողւի, որքան էլ վերջինս ունենայ դատողութեան բարձր ունակութիւն, արտայայտութեանց յաջող ընտրութիւն և անվլէպ ու անսայթակ ձևակերպումն իր բոլոր մտածածների: Զի յաջողւի, որովհետև մարդկային էրուգիցիան, զուցէ շատ կարող ուրիշ հարցերում, անկարող է հոգեկան այս զբութիւնը բնորոշելիս օգնութեան հասնել: Սէրն հոգեկան տեհնդուա ապրումների մի անորմալ շրջան է, որի ըմբռնումը կարօտ է ոչ թէ բացատրութիւնների, այլ զործնական կեանքի անմիջական ու անհատական ապրումների, այլապէս սէրն ըստինքեան մի անմտութիւն կթւայ, լաւագոյն գէպքում փքուն բառերի ու գաղափարների գեղեցիկ շարահարման մի էլլիպսիս: Սէրը չափիտ մետափիզիկայի ինդիր լինի և այդ ըմբռնելու համար պիտի կրել ապրել հոգեկան այդ ուրոյն վիճակը:

Ուրիշի հոգեկան ամեն մի վիճակ ընբռնելուն պիտի անպայման կանխած լինի մեր սեփական հոգու նոյնանման վիճակի ընբռնումը, որով-

Հետեւ ուրիշի հոգին միայն մերի միջոցով ըմբռնել կարող ենք: Եթէ դու չունիս կամ չես ունեցել հոգու մի կամ միւս դրութիւնը, քեզ ընաւ չի յաջողւի ստուգապէս ըմբռնել ուրիշի հոգու այդ քո մէջ չկրած դրութիւնը: Այսպիսով, երբէք չցանկանալով հոգեկան աշխարհի դիտողութիւնների մէջ այլագիտողութեան գերը ժխտել համուշած ենք, որ այդ հարցի վերաբերեալ ինստուիցիան ինքնադիտողութեանը պիտի վերապահւի:

Դեռ շատ հնում սէրը բազմաթիւ անհատների ոգեորութեան ազբիւր է դառել և չկայ մի բանաստեղծ, որ իր երկերում աւելի կամ պակաս չափով տեղ տւած չլինի դորան: Սէրն երգել է բազմաթիւ մարդկանցից նորանոր մոտիւներով: Բազմերանգ գոյներով և ոչ մի բանաստեղծի սէր ապահով կերպով նոյնը չէ մի ուրիշի: Դորա որքան էլ նմանւին միմեանց, բայց էլի կունենան իրենց սահմանող ու տարբերող նիւանաները Յովիաննիսեանի մօտ էլ այդ չէր կարող մոռացւել: Նորա մօտ սէրը բաւականին զօրել շեշտուած մի թեմա է, որ երբեմն նուրբ զգացումներից փոխում անցնում է մինչ տոփանքի տանող արտայայտութեանց:

Այս թեման զանազանակերպ ձեակերպումներով արտադրւած է նորա շատ ոտանաւորների մէջ, որոնցից մի քանիսը, բացի ջերմ զգացումներից, արթէքաւոր են նաև իրրև գեղարւեստական գրւածքներ:

Տեսել ենք արդէն, որ բանաստեղծի կարծիքով ընութեան մէջ «բոլորը վաղն է անհետանալու»: Ըստ այսմ Յովիաննիսեանը պիտի ձգտէր որ և է յարատե ու կայուն բանով շախկապել իրեն, ապա թէ ոչ ինքն էլ պիտի չքանար ու անցողակի լինէր: Եւ նա գտնում է մի յենակէտ, ուր նորա սաւառնող ու սլացող երեակայութիւնն դադար է կարողանում առնել: Այդ յենակէտը գեղեցկութիւնն ու սէրն է, որ երբէք մեռնելու չեն:

Միայն նա կապրի, որ միւս է անմահ—
Սուրբ գեղեցկութիւն եւ սուրբ զաղափար,
Վեհ միտքը ազատ կենդանի կը մնայ
Եւ սերն անձնազնի խեղն եղօր համար...

Այս սիրոյ օբիեկտիւ գնահատումն է, որին համամիտ է նա նաև իր անհատական դատողութիւններով:

Միայն սերը միւս կմնայ
Իմ սրտումը կենդանի.
Ոչինչ սիրող սրտի վերայ
Բննանալու ոյժ չունի:

Հաւանօրէն այս է պատճառը, որ նա ամենից յաջող սէր ու գեղեցկութիւնն է երգում:

Սովորաբար ամեն ինչ աւելի գրաւիչ, աւելի գեղեցիկ ու զեղուն է այն ժամանակ, երբ նա հանդէս է գալիս իր բնական յատկութիւններով, իր ջինջ պարզութեամբ և անարուեստ բիւրեղներով: Պարզ է, որ Յովիաննիսեանը պէտք է

սիրոյ այդքան սելիեֆ արտայայտութիւնների համար դիմէր ժողովրդական անպատճոյն, իր արտայայտութեանց համար խիստ հարազատ լեզուին, որով աւելի անխառն ու բնական գիւրահաճութեամբ պիտի հնչէին սիրոյ այնքան նուրբ տողերը: Եւ Յովհաննիսեան յաճախ այդ լեզուին է դիմել:

Այսպէս մի գեղեցիկ գեղարւեստական ոտանաւոր է նորա «Արագն եկաւ»-ը, որ ժողովրդի հարազատ բարբառով սիրոյ ամենացայտուն տողերից է հիւսւած: Այս երկն այնքան սիրել է ժողովուրդը, որ բանաստեղծից խլելով, իր սեփականութիւնն է դարձրել և շատ շատերը չզիտեն, որ դա Յովհաննիսեանի գրիչն է արտադրել: Այստեղ մեղմիկ հարցումներով սիրահարն Արագին է դիմում՝ իր եարից տեղեկութիւններ ստանալու համար:

Մեզ թւում է, որ Արագն էլ աենդենցիող գեր ունի այստեղ: Նա, որ զարերից իվեր լուս և երբ եմն մի այն բողոքող ականատեսն է եղել ամբողջ հայութեան բազմերանդ վշտերին ու ցաւերին, պիտի որ նաև հայ սիրահարի վշտի աղբիրի մասին տեղեկութիւններ իմանար և կարողանար ամոքել թշւառ սիրահարի այլրած սիրտը:

Գիշերն անեւն գիր կր գրեմ,
Արտասուլս գետ կը օհնեմ.
Արագ, ծեզը ջրիդ շառած
Իմ սեւ դարդը ենք կը բերեմ:

Սիրահարի հոգեկան ապրումներն ու դրութիւնն աւելի լաւ, աւելի զեղեցիկ ընդզբակող այս արտայայտութիւններից մենք լաւը չունինք:

Պակաս սրտառուչ տողեր չեն նաև «Ալագեազ բարձր սարին», ուր դարիր սիրահարն իր հոգեկան այնքան վշտոտ դրութեան նկարագիրն է տալիս: Իւրաքանչիւր ընթերցող դիւրութեամբ կզգայ, թէ որքան զեղուն, որքան սրտառուչ են սիրոյ այդ արտայայտութիւններն, որոնք այսպիսի տողերից են հիւսւած՝

Էն ի՞նչ զուս ա ևն բարին...

Սիրս կարում ա արին,

Ալ իմ բառլան, թեւ տուր ինձ,

Թունեմ հասնեմ իմ եարին:

Սէրը, մարդուս խիստ դիւրազգաց դարձնելով հանդերձ, սովորեցնում է ներող լինել դէպ իր սիրոյ առարկան և բնաւ թշնամական վերաբերմունքի չարժանացնել վերջինիս:

Ախ, այդ աշերիդ ես զոհ բերեցի

Եւ անհոգ վիճակ եւ օրտիս խնդում:

Շատ բան է զոհւած և պիտի արժանի գնահատմանը սպասել, առանց որի տուժած կլինի սիրահարի ինքնատիրութիւնը և վրիժառութեան ոգով զինած... բայց այդպէս չէ: Թէև այդ կոյսի չքնաղ հայեացքը նորան սէր չի խոստանում և նա խարւած է, բայց էլի օրհնում է նորան. այն բոլոր բոսկների համար, որ կոյսը պարզել է նորան:

Պիտի օրինեմ ես այն, թէպէս կարնառեւ
Բայց վեհ, հօգեզմայլ իրնւանքի համար,
Որ հոգուս բերիր դու, ինչպէս արեւ,
Ինչպէս խնկաբոյ մայիս կենարար.

Միայն սիրահարն է ընդունակ այսպիսի վեհ,
հումանիտար զգացմանց և իր շատ զոհաբերութիւնների փոխարէն քիչ վարձատրութեամբ բաւականանալու։ Ամեն մի սիրահար կզգայ, թէ որքան սիրահարական է սիրողի այս վերաբերմունքը։

Աշխարհում ամեն ինչ վաղանցուկ է, վաղանցուկ ու խարուսիկ է նոյն խսկ այն, ինչ ու մարդու կարծիքով յաւերժութեան սանոյդ տիպար պիտի լինի։ Սէրը շատ հաստատուն և յաւիտենական է երեսում սիրահարին, որ մաքով չի անցնում, թէ կզան օրեր, երբ նոյն խսկ այդ աստուածացման առարկան կիջնի նրա աշքում իր բարձունքներից և մի շատ սովորական անձն կդառնայ։ Յաճախ է պատահում, երբ մի գրութիւն կոնտրաստի օրէնքով իր հակապատկեր դրութիւնն է առաջացնում։ բայց և քիչ չեն այն ըռպէները, որոնց մէջ մարդ անէանում է, երբ այլ գրութեանց հնարաւորութիւնն անդամ չքանում է մարդկային երևակայութեան հորիզոնից։ Երկնի անմահներից էլ իրենց աւելի երջանիկ համարած սիրահարների վախճանն այսպէս է նկարագրուած։

Ժամանակն անցաւ, դու երջանկացար.
Մենակ մնացի ես իմ վետի նետ...
Տանջող ընկերիդ դու ուս մռնացար,
Եւ իմ երազներ չխացան անհետ։
Քեզանից սիրուն տեսայ տատերին,
Բայց ուրիշ մեկին սիրել չկարացի.
Սիրս դատարկ է. անցած օրերին
Ես «մնաս բարեւ» արդեն ասացի...»

Այն ինչ մի ժամանակ այս սիրահարների մտքով էլ չէր անցնում, թէ երբ և է միմեանցից կրաժանւին առանց դժւարութեան։

Եւ որքան սովորական է այս.. Սիրող կողմերից մէկն առանց միւսի երջանկանում է, իսկ միւսն էլ, հրաժեշտ տալով անցեալի բոլոր յուշերին, իր ուրոյն կեանքն է ստեղծում իր համար։ Այլ կերպ էլ սպասելի չէր այս աշխարհում, ուր անկեղծութիւնն էլ այլաւ սեռաւ ած է։

Սէրը Յովիաննիսեանի մօտ շատ յաջող երգւած թեմաներից է և սիրոյ բոլոր կողմերը գեղցիկ գուրս է բերւած նրա շատ ոտանաւորներում։

Թշւառ է այն սիրահարը, որի մէջ զօրեղ չէ ինքնասիրութիւնն ու հաստատակամութիւնը, նա պիտի կորցնի ամեն ինքնուրոյնութիւն և առողջ դատողութեան ունակութիւնը և սողայ. սողայ եթէ այդ մօտեցնում է նորան իր սիրած առարկային։

Մի ծայտիդ հնամար ես կիրածարուեմ
Առանց զղջալու բոլոր աժխարհից:

Ի՞նչ կայ աւելի վատ, աւելի անսախանձելի,
քան այն դրութիւնը, երբ մարդ կորցնում է
երկոյթներն ու գէպերն քննդատօրէն անալիդ
անելու ունակութիւնից:

Պատահեկան զեղուն արիւն է եռում սիրահարի երակներում և նա՝ սիրով կուրացած, խըտրութիւն չի գնում զոհաբերութեանց մէջ, միայն թէ անուշ պատրանքներով անցնի օր, տարի: Սա խիստ բնորոշ է «սիրային աշխարհում», ուր մի քանի ունայն ու խաբուսիկ բոպէների համար պատրաստ են նոյն իսկ ողջ աշխարհն ու կեանքը զոհել որն աւելի արժէքաւոր ու բարձր բաների մէջ պիտի կայանայ, քան որևէ կնոջ մարմին ու գեղեցկութեան երկրպագելը¹⁾:

Սիրահար Յովհաննիսեանը շատ աւելի հարազատ, շատ աւելի բնածին է արտացոլում իր երկերում, քան որ և է այլ գէպերում, սէրն այնքան իրական և այնքան ստոյգ արտայայտութիւն է գտել նրա ոտանաւորներում, որ մարդ յաճախ մոռանում է նախկին երազող պոէտինե իր առաջ ոէալ ու անվրէպ պատմագրին է տեսնում:

1) Բօտ մեր դատողութեան «կլէալական» սէրն անգամ արտաքին վայելչակազմութեան և զուրիկանութեան ծնունդ է: Առանց Փիզիքան թովշութեան չկայ ոէր:

Ճիշտ է, ըստինքեան գուցէ այս խիստ անարժէք լինի, եթէ գաղափարի ու խոհականութեան տեսակէտից քննադատելու լինենք, բայց գնահատելին այն է, որ կեանքի ճշգրիտ պատկերն է տալիս. և Յովհաննիսեանն, իբրև միջավայրի ու ժամանակի ծնունդ, չէր կարող այս խնդրում էլ երազայնութեան ու ֆանտազիայի սահմաններում սաւառնել:

Անարժէք կլինէր նրա սէրը նաև այն ժամանակ, երբ կնոջ պարգևած գգուանքներով և հեշտալից ժամանցներով միանգամայն կուրանարնա և չգիտակցէր, որ կեանքում այլ ասպարէզ, և այլ սիրելու բաներ կան: Բայց միայն զգացմունքներով տարւած, սիրող Յովհաննիսեանն է պատրաստ կուսի ապրշում մազերով կախւել ու մահանալը ամեն մահից բարձր գասել. այն ինչ դատող, մտածող Յովհաննիսեանը գորան բնաւ համաձայն չէ: Նա լաւ ըմբռնում է, որ կոյսն իր պատրանքներով խիստ վաղանցուկ է՝ —

Եղո՞ւկ նորան, ով զին է տալիս
Կուսի հետօնից, զերմ զգուանեներին.
Հրապուրիչ է նա, ուզես վառ մալիս
Եւ դիւրափոփոխ զերը օր գարնային:

Սակայն բանաստեղծն այստեղ հակասութեան մէջ է ընկնում, որովհետեւ նա ինքը ոչ միայն զին է տալիս, այլ և չափազանց գնահատում է կուսի գգւանքները.

Ոչ փառքը նորա, ոչ անարգ ոսկին,
Գրկախառնութեանդ եւ ոչ մի վայրկեան,
Երբէք չեն արժիլ, հոգեա՞կ իմ անզին:
Կուսի գգւանքներն ու սէրը գնահատելով
հանդերձ, նա իր սիրտն ամբողջապէս չի տալիս
նորան, որովհետեւ

Սի անկիւն նորա անմելին խորեում
Այլ սիրոյ համար ես կամիմ պահել:
Այդ սէրը հոգատար կեանքից ծանրաբեռն-
ւածների ու գրկւածների համար է: Նա սիրում է
կեանքի հոգսերից կնճոռտածների ընկերը լինել.
կեանքից հալածւածների հասարակութիւնն է սի-
րում, որի համար և իր սրտի խորքում մի անկիւն
է պահում:

Եւ դոցա համար ես սեր եմ պահում,
Այդ նակատագրի խորը որդուց համար,
Որոնց առաջին դուռը չե բանում
Միիրարութեան՝ բարասիրտ աշխարհ...

Դնահատելով տանջւածներին միմիթարելը,
Յովհաննիսեանը կուսին էլ է առաջարկում զոհա-
բերել իր սէրը թշւառներին սփոփելու համար.

Տուր ինձ, սիրելիս, եւ քո սերն անբիծ
Այս հառաջանելի հովիսը տանիմ—
Գուցէ արցունքը ցաւած աչերից,
Մաւեած նակատից թախիծը խրիեմ,
Շըշապատի խեղճ ու աղքատ գրութիւնը
նորա մէջ կերտում ու մշակում է մի նոր հաւատ,
որի համար նա պարզում է իր դրօշը:

Իմ նոզու ձայնին ես հաւատում եմ,
Եւ աղբատութեան ու երգի համար
Ես իմ դրօւակն ահա պարզում եմ—
Եւ այսուհետեւ հաւատա պայծառ:

Տեսնում ենք ինչպէս Յովհաննիսեանի սէրը
սակաւ առ սակաւ փոխում է իր բնոյթը և աւելի
ու աւելի հաշւի առնում հալածանքներն ու կե-
զեքումները: Այս տեսչը նորան տանում է դէպ
ճնշւածների կոլլեկտիւ ամբողջութիւնը, դէպ հայ-
րենիքի տանջանքներն ու մտորումները, բայց
այս մասին կխօսենք քիչ աւելի ուշ:

Իր հերթին ասացինք, որ Յովհաննիսեանի
սէրը խիստ սրտառուչ, խիստ հարազատ է ցոլա-
նում իր երկերի մէջ: Բայց պիտի ընդունենք, որ
այդ կատեղորիայի տակ կան նաև այնպիսիները,
որոնք նուրբ զզացմանց ու մաքուր սիրոյ ջերմ
արտայայտութիւններից չեն հիւսւած: Օրինակ
«երգ»-ի մէջ պարզ նկատում է, թէ ինչպէս սէրը
մոռացւած և աշխարհիկ ցանկութիւնների ազդե-
ցութեան տակ կիրք ու վաւաշոյտութիւն է ար-
տաղրւած: Այստեղ մենք մոռանում ենք նուրբ ու
քնքոյց սիրոյ այնքան գեղեցիկ երգչին և նանիր
ցանկութեանց երկրպագուին տեսնում մեր առաջ:

Իրաւունք տուր՝ ծծեմ մեղրը ցրունքիդ,
Քաղեմ կարմիր այդ վարդերը թշրիդ.
Ով որ առնի հոտը տամամ ծծերիդ
Էլ կարո՞ղ է քէ մի զին տայ իւր կեանքին:

Փառք տոփանքի մեծ ջատագովին, յստակ սիրոյ երգչի անկմանը... Սա արդէն սէր չէ, այլ վաւաշոտութեան զօրեղ արտայայտութիւն, ի դէպ է յիշել, որ սիրահարը երբէք նման դարձւածքներով չի դիմի իր սիրոյ առարկային, այլապէս այդ սէրը վաղանցուկ է և պրոդուկտ նանիր կըքի¹⁾:

Ա Տեսանք, որ Յովհաննիսեանը ցանկանում էր յարատել լինել և կեանքի անկայուն լինելը նորան խիստ մեծ մտատանջութիւն էր պատճառում: Այս իսկ պատճառով նա ուզում է ձուլուել սիրոյ մէջ, որովհետեւ անձնազո՞ն սէրը, որ խեղճերին է նւիրուած, անանց է: Ահա այս անանց լինելու ցանկութիւնը կարծես նորան տանում է հայրենիքի սէրը, ուր խեղճերն ու թշնամներն անթիւ են:

Հայրենիքի ու ազգայնութեան սէրն էլ բաւականին զօրեղ զգացում է մեր մէջ և մարդ շատ յաճախ սէր ու յարգանք է զգում դէպի այն հողն ու ջուրը, քարն ու քարափը, ուր նա ծնւել և անց է կացրել մանկութեան անհոգ ու քաղցր ժամերը:

1) Այս թող հակասութիւն համարուի սիրոյ մասին քիչ առաջ արած մեր նկատողութեանը: Զպիտի համարուի, որովհեակ սէրը մարմնի դուրեկանութեան և հաճելիութեան զգացումներից ծնունդ առնելով հանդերձ, մինչ անկման գիմելը երբէք նման վաւաշուա ապրումների ֆազով չի անցնում: Եթէ սիրահարի կեանքում նման ցանկութեանց ու զգացումների տենչ է առաջանում, դա մի մեծ փոփոխութիւն է, որը սիրոյ անկման ակնյացանի նշանն է: Այդ օրուանից սէրն անցնում է կըքի ու վաւաշոտութեան:

Այդ վայրն ըստ ինքեան կարող է շատ անդուր ու ոչ գրաւիչ լինել, բայց և այնպէս սիրելի, կարօտալի է միշտ: Տարէք ֆինլանդացուն, ասում է Կարամզինը, գեղասփառն իտալիա և նա անձկութեամբ աչքերը դէպի հիւսիս կյառի, որովհեակ իւր գեղեցիկ ու տենչալի վայրն այնտեղ է թողել նա: Մարդկային գատողութեան համար այս բաւականին տարօրինակ ու խորթ երևոյթ է, այնինչ զգացմանց օրգանը դորանից աւելի սովորական ապրումն չունի իր համար:

Յովհաննիսեանն էլ երգել է հայրենիքն իր անուշութիւններով, բայց աւելի թոյլ թափով: Երկում է, որ հայրենիքով կլանւելը, հայրենիք երազելը իր զանազանակերպ գրութիւններով Յովհաննիսեանը չի կարողանում հարազատութեամբ ու անկեղծութեամբ երգել.. իսկ բանաստեղծութիւնն, առանց ներքին ապրումների, առանց հոգեկան անկեղծ զեղումների, ոչինչ է: Բանաստեղծութեան արժէքաւոր ու անարժէք լինելը չափում է ոչ թէ նրա հնչիւն լինելով, ոչ թէ նրա մէջ արծարծւած գաղափարներով, այլ թեմաների հարազատութեամբ ու անկեղծութեամբ: Միայն նա է բանաստեղծը, ով իր գրուածների հետ ձուլուել, ապրել ու անէանալ գիտէ... Ահա այս պատճառով Յովհաննիսեանն այս թեման երգելիս իշնում է իր բարձրութիւնից: Եթէ նա չունենար լեզուի այնքան հոյակապ ստիլը, որ շատ հմտօրէն առաջ է տարուած նրա երկերում, հայրենիքի եր-

գերը մեծ մասամբ անպէտք կդառնային: Եւ լեզւի
հնչիւնութեան ու օրինակելի շեշտի շնորհիւ միայն
նորա այս ոտանաւորներն այսպէս թէ այնպէս
ապրում են, յաճախ նոյն իսկ ոգևորեցնում:

Սակայն սոցա մէջ էլ կան այնպիսիները,
որոնք բաւականին ուժեղ են իրենց հարազատու-
թեամբ և զգացումներով: Այնպիսիներից է «Վար-
դանանց օրը», որ, հաւանօրէն, ոգևորութեան վառ
ըռպէիս պիտի զրուած լինի:

Այստեղ երկու գրութիւն է նկարագրուած.—
առաջին, ուր ներկայիս ստոյգ պատկերն է տալիս,
թէ ինչպէս առօրեայ հոգսերը, բաքոսական զե-
զութիւններն, ունայն փառքը ոսկէ հորթն գե-
րազոսող և էական գեր են խաղում, միանգամայն
մեր մէջ մեռցնելով վառ կիրք, սուրբ զգացում,
ազատ վիճակ, ամօթ ու արդարութիւն... Բայց
այս գրութիւնն այնքան էլ ցաւալի չեր լինի, եթէ,
գոնէ, մենք գիտակցէինք ու արժանի գնահատումը
տայինք... սակայն մեզ կուրացը են, որովհետեւ

...մեր անզգայ կուրծքին կախ տալով

Մի ցընորական պատոյ բոժոժներ՝

Միրել են տալիս մեզ նենզ զգուանենով

Անարգ բարուկի բունու ըղբաներ,—

Այս տունն աւելի քան պերճախօս է ներկայ
կեանքը բացատրելու համար, թէ ինչպէս պատու-
բոժոժներից՝ այն էլ ցնորական պատոյ բոժոժ-
ներից, կուրացած, մենք սիրում ու փայփայում

ենք այն, ինչ որ մեզ համար կորստեան և
ստրկութեան խթան է ծառայում:

Ի՞նչ կայ աւելի դառը, աւելի աղեկտուրք,
քան այս տեսնելը, գիտակցելը և ոչինչ անել չկա-
րողանալը: Շատ յաճախ անգիտութիւնը մարդու
բարօր վիճակն է պարգևում: Երջանիկ են նոքա,
որոնք հեռուն տեսնելու և երկրի լուրջ վերլու-
ծումն անելու ունակութիւնից աղքատ են... Սոքա
միամիտ ու հանգիստ են՝ տանջւելու առանձին
բան չունին: Տգիտութիւնը յաճախ անձնական
բարօրութեան առատ աղբիւր է: Բայց այդ երջա-
նիկներից չէ Յովհաննիսեանը, որովհետեւ գիտու-
թիւնն, ինչպէս գանդաղկոտ մի թոյն, աննկատելի
վարակեց հոգիս, ասում է նա: Նա լաւ տեսնում
է այդ բոլորը և որովհետեւ սիրում է իր հայրենի-
նիքն ու ցաւում նրա այդ գրութեան վերայ, գառ-
նանում է հոգով և արցունքն աչքերին մաքով
սլանում է այն աշխարհը, ուր բոլորովին նոր
մելոդիաների ու մեղեդիների ձայնն է լսում:

Ոհա բռնուրեան կապանն խորտակած

Սուրբ ազատութեան մատաղ դիցուիին

Փաթում է հային մարտից բուլացած

Զեռ ին նոր կեանի ծաղկող ձիրենին:

Այս նոր վայրում դալարիքն արեամբ են
ներկւել և դիւցազանց հոգիներն արթնանալով,
նոր Աւարայր են բացել նոցա առաջ, որոնք դի-
մում են մեռնելու և կուելու: Եւ պարզ է, որ այն

աշխարհը, ուր մարդիկ իրենց բարօրութեան ու
ազատութեան համար ամեն ինչ արեամբ են յեղ-
յեղում, պիտի միանգամայն հակապատկերը լինէր
մեր այս աշխարհի, որտեղ մեր արժանապատռու-
թիւնն ամեն քաջափոխում ոտնահարւում է և վի-
րաւորելու զգացումը բնաւ չի բռնկում մեզ:

Ապա նկարագրուած է, թէ ինչպէս փափ-
կասուն կանայք և նազելի տիկնայք, իրենց մա-
զերը վիրակապ դարձրած և պաճուճանք մոռացած,
գաշտ են շտապում:

Մեր հայրենիքի մեծ երգչի-Գամառ-Քաթի-
պայի գուրգուրած ու փայփայած դրութեան երկ-
րորդ էտապն է սա, ուր նախորդի միայն երազած
դրութեան իրականացած լինելն ենք տեսնում:

Եւ պարզ է, որ այս ոգեսորութիւնն ինքն
ըստ ընքեան յաղթանակի մեծ մասն է, որովհետեւ
Եւ մենք մեռնում ենք մեր մահն օրինելով,
Որ մեծ, սուրբ զործի եղանք նահատակ,
Սուրբ ազատութեան այգը տեսնելով
Եւ անմահութեան անքառամ պատկ:

Սակայն սոքա պատրանքներ էին, որ երկար
չէին կարող շարունակուել, որովհետեւ իրականու-
թեան մէջ ոչինչ նման բան չկար և բանաստեղծը
պիտի վերջը սթափուէր ու դրէր:

Բայց աւազ՝ յենո՞քիս. դեռ մօս չե գարուն
Ոչ ժանին է զնջուել մեր ըգրաներից,
Ոչ մեր կուրծքն է ծաղկավ գարդարուն,
Ոչ այգն է զոկում խաւար զիւերից...

Այսպէս ուրեմն երբ դեռ այդն ու գիշերը
միմեանցից չեն տարբերում և ստրկութեան շըդ-
թաների ժանգն անգամ անհետացած չի, նորան
հակապատկեր դրութեան բոպէներ են այցելում:
Անշուշտ հոգեկան այս հալիցինացիան ունի իր
պատճառները, որ բանաստեղծի մէջ պիտի որոնել:

Շատ յաճախ կրկնող հոգեբանական երե-
ւոյթ է այն, որ հոգու ամենսաթոյլ էլեմենտն ան-
գամ ընդունակ է իր աւելի կատարեալ դրութեան
պատկերն արտադրելու պատճառը դառնալ: Ու-
րեմն և Յովհաննիսեանի մէջ հայրենիքի բարօր
վիճակ երազելը մի տարօրինակ ու անսովոր երե-
ւոյթ չպիտի համարել: Չպիտի համարել, որովհե-
տեւ նրա մէջ կայ այդ յոյսը, որն անշուշտ ժա-
մանակի ու միջավայրի ծնունդ է, և բնաւ զար-
մանալի էլ չի, եթէ նրան պահ մի այդ դրութիւնն
է պատկերանում:

Յոյսը մի խիստ զօրեղ տնօրինող է Յով-
հաննիսեանի կեանքում և այլապէս կեանքը նրա
համար մի անարժէք գոյութեան, գուցէ և չգո-
յութեան, կվերածէր:

Մարդկային այս ձնշող մթնոլորտում, ուր
բազմաթիւ ու անվերջ են փատեցնող բոպէները,
ուր յուետեսութեան ժամերն անհամար են, ան-
կարելի կլինէր ապրել եթէ մի բարօր ապագայ
չպատկերանար մեղ հեռում, վառ ու վարդագոյն
գոյներով բարուրուած... Եւ այդ հնարաւոր է
զառնում միայն յուսոյ շնորհիւ: Յոյսը հոգու այն

միակ էլեմենտն, որ է, հովանաւորում է մարդկանց և հոգատար աշքով գուրգուրում և ապրելու է հրաւիրում: Նա որպէս մի սիրէն, կասէր բանաստեղծը, կախարդում է մեղ և հեռուում կեանքի գրաւչութիւնները ցոյց տալով, յորդորում է համանգոցա... Եւ մենք ապրում ենք չեղածն իրականութիւն դարձնելու ձգումամբ: Յոյսը ջուրն է, մարդը՝ հողը, իսկ կեանքը՝ բուսականութիւնը: Ինչպէս առանց ջրի անհնար է բուսական աշխարհի գոյութիւնը, այնպէս էլ առանց յուսոյ երջանիկ կամ կեանքից գոհ լինելը անհնար կդառնար: Այսպէս էլ ընդունում է նաև Յովհաննիսեանը:

Եւ չեղածի յուսովն է միշտ,
Որ տալիս ենք կեանին մի զին:

Պարզ է, որ այդ չեղածը յուսոյ երևակայածն ու պատկերացրածն է, կեանքի հովանաւորը, մարդկութեան բարերարը:

Բայց հնարաւո՞ր է անվերջ յուսալ... Յաճախ մարդ ընկճուում է իր յուսոյ մէջ և ցանկանում ամեն ինչի վերջ տալ: Բանաստեղծի համար, ներկայ կեանքը շատ աննպաստ է յուսահատւելու համար, որովհետեւ մեր նախնիքների մեծութիւններից ամեն ինչ կորած է մեր մէջ:

«Զեր նախնեացը ել չեմ նրման դուք, հայե՛ր.
Չունիք այլ եւս հայրենասէր այն ոգին.
Հայ սար, հայ զեօ՛, հայ դաւորայք ուունչ առած
Պիտ ամօքով այրեն ձեր սեւ երեսներ:

Բաւական չէ այս. կեանքն էլ միանգամայն այլասեռած է.-չկայ վառ կիրք, մաքուր զգացում, արդարութիւն, խիզ և ամօթ: Պարզ է, որ նման պարագաներում, երբ բարւոքւելու և ոչ մինչոյլ չի երևում, բանաստեղծը պիտի յուսահատուէր և մահ ցանկար:

Արտաւագդ, փւրովի թող կուռ կուան.

Արձակին բազուկներդ, եւ դու աշխարհին
Դուրս արի բերելու կառուա՛ծ, աւե՛ր...

Բայց միթէ անդարձ հանգաւ նրա մէջ այն հաւատը, որ քիչ յետոյ կտեսնեն, թէ որքան հուժկու է բանաստեղծի մէջ, և նա դաժանացած մահ է սփռում ամենուրեց: Անշուշտ, ոչ քիչ ուշ, նա նորից մեղմանում է՝ իր հաւատով ջերմացած և զղում իր սխալի համար:

Բայց ո՛չ. հաւատում ենք դեռ մենք փրկութեան, Մեզ մի նոր երկնից մի նոր լոյս կը բացուի,
Եւ տեսնում ենք ահա արդէն ծիածան

Մենք ազա՛ս լուսաւոր մի նոր վիճակի...

Եւ թէ բանաստեղծի երևակայութեան թափն ինչ նոր երկինք է տեսնում, այդ մեզ մութն է:

Հայրենիքը երգելիս Յովհաննիսեանը յաճախ թողնում է գեղարուեստը և հրապարակախօս-քարոզի վերարկուն է առնում իր վերայ: Սակայն հայրենասէր - հրապարակախօս Յովհաննիսեանը շատ աւելի անկատար է հենց իբրև այդպիսին, քան որ էր մէր ու վիշտ երգելիս:

Սիրողի ու զգացողի համար խիստ հարազատ
են ապրումների երերումներն ու անկայունու-
թիւնը։ Բայց հրապարակախօս քարոզիչը պիտի
ունենայ մի պարզ ու մեկին նպատակ, ձգտման
մի անփոփոխ գործելակերպ, որը խիստ կաղում
է Յովհաննիսեանի մօտ։ Քարոզչի միսիան ստանձ-
նելով, նա խիստ տատանում է իր անելիքի մէջ
և մերժ հանդիսանում իրեւ միջնադարեան դաժան
ասպետ, որ իր նպատակին հասնելու համար ա-
րիւն ու մահ է տարածում չորս կողմը և մերժ
Քրիստոսի զէնքով է զինուած ասպարէզ իշնում։

Սակայն պիտի ասել, որ ասպետ ու Քրիս-
տոս երկու ծայրահեղութիւններ են։ Քրիստոս իր
յաղթանակը տարաւ հեղութեամբ ու սիրով—մի
բան, որ այժմս, մանաւանդ հայրենիքի աղատու-
թեան ինդրում, խիստ անզօր միջոց է. իսկ աս-
պետը միայն անհատական ուժն և ունակութիւնն
է հաշւի աւնում—մի բան, որ ըստ երեոյթին խորթ
է Յովհաննիսեանին հայրենիքի աղատութիւնը
երգելիս։ Ահա այս հակասութեանց սինթէզն է
այստեղ Յովհաննիսեանի մէջ աչքի զարնում և
միաժամանակ գրում է և այս՝

Բարդ բարդ ամպեր քող կուտակի ին, բանձրանան,
Ամպրոպ նայրի, շանթեր փայլին մեր վրան
Զվիստինեմ, եւ միւս յառաջ անվրդով—

որովհետեւ

Բեղմնաւուած անկածերի արխանով՝
Երկիրն ելի պառով կտայ երկունեօվ։

Ժամը կրօպայ, կրդադարի փոքրիկ
Եւ յագրութիւն կը վաստակեն մեր որդիի։

Սորա հետ նաև հրաւիրում է սիրով ու հե-
զութեամբ սպասել և յուսալ, թէ բացեկու է ար-
շալոյսը և երկիրը լուսաւորելու է ոսկեցող ցոլ-
քերով։

Կոգեի հնչեր իմ փողն ահարկո՛ւ,
Թնդացներ սրեր իւր ձայնովն հուժկու,
Քնածք զարբներ, բոյլր արխանար
Կուռելու ցման սուրբ գործի համար։

Շատ էլ թէ մէկը շատ բան է ուզում, ար-
դեօք այդ յաջողուում է նրան։ Յովհաննիսեանն էլ
ցանկացել է ահարկու փող փչել և բոլորին գարթ-
նեցնել, բայց այդ ցանկութիւնը լոկ ցանկութիւնն
էլ մնացել է։ Եւ այդ փողի ձայնը նրան իր նպա-
տակին չհասցնելուց բացի, վրգովում ու խան-
գարում է քաղցր հանդիսաւը մեր այն ականջների,
որոնք սիրոյ ու կարեկցութեան թովիչ տողերով
անուշ մրափել էին։

Բայց անուրանալի է այն, որ հայրենիքի
երգերը կարգալիս, մարդ մի վերին աստիճանի
գնահատելի և անընկանելի ոյժ է տևանում Յովհան-
նիսեանի մէջ, որով նա մի առանձնայատուկ և
պատւառը տեղ է զրաւում մեր բանաստեղծների
շարքում։ Դա նրա խիստ ամուր հաւատն է, որ
ամենակրիստուկան բովէին անգամ նորան թար-
մացնում է։

Նա, որի հաւատը թոյլ է, չի կարող ուրիշ-
6

ներին ևս հաւատ ներշնչել, ասում է Լաօձէն, Դակ
Յովհաննիսեանը տեսչ ունի բոլորին համոզել, որ
ապագան վարդագոյն է, ապագան մերն է, ուրեմն
և ինքն էլ դորան պիտի հաւատար: Այս տեսա-
կէտից նա մի չտեսնուած ուժ է մեր մէջ:

Թող աւերւի հայրենի տունը հիմնայսակ,
Բայց քանի հուրեն առկայծում է դեռ մոխրի տակ,
Նորա կորուսն, ո՞հ, մի՛ ողբալ դու սգաւոր—
Իբրև փիւնիկ նա կրյանէ անուն մի օր...

Մի՛ ուրիշ անգամ նա ասում է՝

Քանի չէ մարել օջախի կրասկ.

Տունն էլ է կանգուն, տան տերն էլ կենդան:

Էլ չկան բոցեր, բայց պաղ մոխրի տակ

Կայծերը երկար գեռ պիտի մնան:

Կրգայ ժամանակ, սիրով կեանք կը տանք

Ու կրբորբունք մենք հուրը բախուն

Եւ դու կրտեսնես չենադ ապարանք

Այնտեղ, ուր նիմա տեսնում ես անիւն:

Ինչից է ծագում այս անսպառ յուսոյ զօ-
րութիւնը բանաստեղծի մէջ, երբ իրականութեան
մէջ ոչինչ տրամադրող չկայ: Պիտի ասել, որ այս-
տեղ դեր է խաղում նորա անհաւական սասու
մտածելակերպը: Բայտ Յովհաննիսեանի ամեն մի
դժբախտութիւն բարօր զրութեան նախօրեակն է.
Գիշերւայ սե, ահսելի խաւարն աւետաբեր լուսոյ
է նշան: մռայլ փոթորկին անպատճառ պիտի
պայծառ արևով լուսագեղ երկինքն յաջորդի և այլ
նման մտորումներով Յովհաննիսեանը ցոյց է տա-

լու, թէ որքան աննկուն է իր մէջ հաւատը:
Տարերքն ինչ դաժանութիւններ էլ անելու
լինի, յուսով եմ վաղ ուշ, գարունը պիտ գայ,
ասում է մեր հայրենիքի մեծ երգիչը: Նոյն այս
անընկճելիութիւնը տեսնում ենք նաև այստեղ:

Դեռ նեռու է կատարե անամայ ու յասակ,
Բայց երէ ջրհասնենք այնտեղ մենք այսօր,
Վաղն այնտեղ ենք անուուք, մերն է յաղբանակ—
Դեպի վե՛ր, սարն ի վե՛ր, անվեներ զինուոր:

Վաղ թէ ուշ—եթէ ոչ այսօր, զոնէ վաղը—
նա անշուշտ կատարն է հասնելու, որ յաղթա-
նակի վերջակէտն է:

Երկար ապրելով էջմիածնում, որի կամար-
ների տակ բաւական զօրեղ է վանական կեանքն
իր հաւակնոտ մեսիայով, Յովհաննիսեանն ակա-
մայից երբեմն յարել է դորան և արտայայտիչ
դառել վանական սնոտիպաշաշտութեան:

Ընդունելով հանգերձ, որ անցել է մեր պար-
զամիտ մանկութիւնը, և որ հինաւուրց առաս-
պեիներն էլ նախկին թովչութիւնը չունին, բայց
և այնպէս նորա հոգին մոռացութեան աւերից
մի զրոյց ազատել՝ պահել է, որ երբեմն նորան
մտածել է տալիս:

Ոչ բնութեան ստեղծւած է այն հրաւալի
Եւ ոչ կերտւած նաւարարութեան մարդկային,
Այլ մի ուրիշ չնաշխարհիկ զօրութեան,
Մրարշութեան խորհրդաւոր մի գաղտնիք,

ՅԵՐ մեր հոգու լուսոյ ջահն է նուիրական,
Ողջոյն ազգի կենդանութեան երաշխիք:

ԶՆԿՐ առասպելներ...

Կղերի այս կնիքը երբեմնակի գունաւում է
նրա այլ և այլ ապրումները նոյն իսկ սէր եր-
գելիս, որի մէջ նա օժտւած էր միծ ունակու-
թեամբ, էլի երբեմն լսում էր եկեղեցու, խաչ
ու աւետարամի ձայնը:

Ամենայն զիրք միւս կարդում են,
Սիրոյ գիրեք չկամին.
Ո՞ւր, չըգիտեմ, որոնում են
Բախսը իրանց խելի կեանքի...

Իսկ այդ սիրոյ գիրքն Աւետարամն է, որի
մէջ էլ, երկի, մարդիկ պիտի որոնեն բաղզը իրենց
խեղճ կեանքի:

~~Հայրենիքը երգելիս էլ նո յաճախակի նման-~~
~~տոն է տալիս իր երկերին և էջմիածնից միծա-
միծ սպասելիքներ ունի.~~

Անփառունակ սրովկ երկրի դու լուսազեղ
Անելզ փառս ազատութեան, եզմիածին:
Յուրած հօսի դու ժողովող անենյը փարախ,
Հաստատ լինի բող մեզ վերայ ու նովանին.

Ողջունում ենք սիրոյ ու թախծի վերա-
ծնւած բանուստեղծին: Այս բոլորը եթէ չասէր
«Արագն էկաւ»-ի ստեղծագործողն, այլ սկազգեստ
մի վանահայր, ոչինչ, կսպէր, բայց Յովհան-

Նիսեանին բնաւ չի բարձրացնում վանքի ու ջա-
հերի գորութեան ջատագովելը:

Մակայն երբ Յովհաննիսիանը թողնում է
բարձրագորդ աղաղակներն ու հայրենիքի եր-
գերն մեղմացնում է խորհրդաւոր ու առաջգա-
կան սիմեոլիզմով, միշտ էլ յաջողութեամբ է
պսակւում նա: Երկումէ, թէ որքան գորեղ է բա-
նաստեղծի այս չնորհքը:

Քամուն ու գետին, ալիքներին ու ժայռե-
րին, գաշտերին ու լեռներին շունչ ու կինդանու-
թիւն տալով կարողանում է իսկապէս ոգեսրել
իսկապէս ապօեցնել մեզ:

Զարատանջ պանդուխս, Էամի դու ձերան,
Ի՞նչ ես կամենում. ինչո՞ւ անհանգիս
Պատեցնում ես Տարափեները ձեան.

Եւ քամին—սրտացաւ ~~հայրենասէրը~~ պատ-
մում է թշւառ հայրենիքի ~~դրութիւնը~~, որն ա-
մայանում է:

Ես ոլանում եմ չորցած դաշտերից,
Ուր երես աւերակ նոր աւերակին
Միւս տեղ է տալիս, բոլոր կրծիւրից
Լոկ հառաչան է բռչում դառնազին.
Յովհաննիսիանը դժւար թէ կարողանար
այլ կերպ ոգեսրել այնպէս, ինչպէս ոգեսրում է
գետը՝ պատասխանելով ուսիների նախազգու-
շացումներին:

«իմ բոյր, եղբայրն են այն ակն ու վտակ»—

Ասում է գետը, իր սարսած ափերին զարչ
կուելով և զնում միանալու այն երկրի բնակիչն
ների հետ, որտեղ գետ ու սար արիւն են ըռնել:

Միշտ էլ նա աւելի ազդող է, երբ խօսում է
սարի ու գաշտի բերանով, քան երբ անձամբ
մարտի է հրաւիրում հային:

Ասիր ե՛լ, հագիս, ուլքադ թօրավիր,
Սէրդ բաց արա այդ մահւան քնից,
Թէեւ մահամերձ, դու մի ձայն հանի՞ր—
Գրդիք օգնութեան կատն չորս կողմից:

Տեսնում ենք, որ բառերը խիստ հնչին,
շշուը խիստ գորեղ է, բայց ուր և որքան նպա-
տակայարմար է այդ կոչը, հաւանորէն, ինքը բա-
նաստեղծն էլ չի իմանում:

Բայց գորա հակառակ, երբ նա զրում է՝
Մնջութիւնն էլ նրանի հո չի մի զովելի յատկութեան.
Տեսնում ես, որ մենիք քմրած ենի, բունի անուն է
մեզ բըւում.
Է՞ր ես դու էլ մեզ բոլորիս մատող բրնիցն յաղըրում.
Առ չունցուրդ տուր լարերին կրակ վառ իր մեր սրբ-
տում,

Մեզ ամենիս նոր շունչ տուող մի բան առաջի:

Մեզ դիւթում, ոգեսում է, որքան որ հնա-
րաւոր է: Վերջապէս ամեն կերպ նրա կոչը հա-
րազատ է, երբ զէնքով ու արեամբ չի արտայայտ-
ւած: Իսկ ամենից էականն այն է, որ Յովհան-
նիսեանը չմոռանայ իր խոստումը, որ ասել է —
«Չեղ չիմ մոռանայ գեղեցիկ օրեր, ծաղկավառ.

օրեր» և իմանայ, որ կուսական որտե, սիրոյ ար-
բեցման, նազելի վշտի, անհոգ խնդումի, թափնձի
ու կարեկցութեան բնազաւառում նա անընկճելի
տիտան է և այդ վերուստ նրան պարզեած իշ-
խանութիւնը նա բնաւ չպիտի բաց թողնի ու հո-
գու այլ ապրումների նկարիչ գտանայ; որովհետեւ
այսակեղ վրձննը նորան չի հնազանդուում յաճախի:

Ճուր մօտականաչ հրաւագել գարնան

Վառ, երանաւես, անանց երազնեւ.

Թող մենիք անձնատուր մի անհուն զգացման

Անցիւս բուն լինիք օրեւ տարինեւ:

Այս քունը սակայն մահւան քուն չէ, այլ
թարմանալու:

Ուրեմն ով է Յովհաննիսեանը.

Յովհաննիսեան ասելով մենք աչքի առաջ
ունինք նրան, եթէ կարելի է այսպէս ասել իր
գերազանց էութեամբ: Նորա հոգեկան աշխարհը, նրա
փիլիսոփայական տերմինով ասելու լինինք, նրա
«Հովի» և ոչ «Եսերի» համազուման ու պատկերն ի
նկատի ունինք: Փոքրենք իրազեկ լինել անցհալում
մեր ասածներին և եզերել նրա հոգեկան աշ-
խարհն այնպէս: ինչպէս նա ցոլանում է իր գըր-
ւածքներում:

Թէ ինչպէս է կազմակերպւում մարդկային
հոգեկան աշխարհը, դու մի անլուծելի խնդիր է
մարդկային էրուղիցիայի ու մտքի համար: Հո-

գեկան աշխարհի ամբողջ բովանդակութեան միակ պատճառն արտաքին աշխարհն ընդունելը մի տարօրինակութիւն գուցէ համարուի, որովհետեւ հաստատապէս որոշել, թէ որն է որի հետևանք և որը որի պատճառ՝ գժւար է. հոգեկան ապրումներն են հետևանք արտաքին աշխարհի, թէ զրափ աշխարհն է հոգու անբաժան պատկերացումների ու երեակայութեան բարդ արդիւնքը. Հոգին, իր կազմիչ էլեմենտներով, ինքն ըստ ինքեան անկախ մի երկոյթ է մարդ անհատի մէջ, թէ դա մարդու և զրափ աշխարհի օրեկտների հետ ունեցած յարաբերութեանց թանձրացեալ պատկերացումն է: Հնաբաւո՞ր է արդեօք տեսանելի աշխարհի ուշալ գոյութիւնը առանց մարդկային հոգու, կամ առանց նրան մի ապսուրդ չի լինի հոգու այժմեան ամենակարող գոյութիւնը... Այս հարցեր, որոնք մեզ թւում են, թէ բնաւ չլուծուելու և հաստատապէս չինորոշւելու յաւերժութիւն ունին: Այսպէս թէ այնպէս իբր փաստ մնում է այն, որ ոչ մէկի հոգեկանը նոյնը չէ միւսի հոգեկան աշխարհին:

Բայց թողնենք մեզ չհետաքրքրող այս խընդիրները և դառնանք Յովհաննիսեանին:

Յովհաննիսեանը երազող է...

Նա աննկուն է իր յուսոյ մէջ: Իսկ վերջինս նորան անորջների մէջ է ձգում և նա յաճախ երազում է այն, ինչ որ բնաւ չի լինելու: Նա երազներով է յագեցնում իբրեւ:

Յովհաննիսեանը տեսչացող է...
Կեանքի անմիթար ներկան, միախառն-
ւելով երազայնութեան բարօր ապագայի հետ,
ծնում, առաջացնում է նրա մէջ ձգտման ծարաւը,
և նա միշտ տեսչում է զէպի բարձրը—դէպի
վեր, սարն ի վեր:

Յովհաննիսեանի սէրն անսահման է ..

Ցանկանալով յարատել լինել, նա աշխատում
է ձուլուել սիրոյ մէջ և անէանալ, որովհետեւ
սէրն անմահ է, իսկ նա սիրում է անմահութիւնը:

Յովհաննիսեանը սկսոր է...

Հնարաւորն է արգեօք տեսնել ու կրել այն
ամենը, ինչ որ կայ շրջապատում և ուրախ մնալ:
Մանաւանդ նրա զգայուն ու սիրող սիրու մտերմի
գառնութիւնն իւր գառնութիւնն է համարում և ըն-
կերոջ սուզն իբրեւ սգալ է տալիս: Վերջաղէս սէրը
տանջանքի ու սուզն աղբեւր է, իսկ նա սիրում է:

Յովհաննիսեանը խրախուսող է...

Նորա սէրն, իր ուրոյն բնոյթով, տանում է
նորան գէպ լքեալներն ու թշուառները և նա ա-
մեն բովէ պատրաստ է օգնութեան ձեռք մեկ-
նել նոցա ասելով, թէ փորձութեան բովում կոշ-
տերով ծածկուած այս ձեռքս բարեկամ է լքեալ
թշուառներին: Նա յորդորում է չընկճուել կեանքի
տանջանքներից, որովհետեւ դա մի ընդհանուր
դրութիւն է:

Բայց դու չզիտե՞ս, որ դեռ անվիշէ՝

Զէ տեսնած մի հոդածին:



Յովհաննիսեանը համերաշխութեան՝ քարոզիչ...»

Ինքը սիրոյ և կարելցութեան երկրապագու լինելով, չէր կարող ուրիշներին այլ բան սովորեցնել, իսկ այդպիսովնա համերաշխութիւն է քարոզում: Սէր, կարելցութիւն և համերաշխութիւն՝ մի սրբանւէր երրորդութիւն են կազմում բանաստեղծի մօտ, որոնք մէկը միւսին լրացնում են:

Կուզեի տեսնել եղբայրն եղբօր նետ
Գեղեցիկ զործում ձեռք ձեռքի տած,
Սէր եւ հաւուրիւն իրանց կարապետ,
Եւ սուրբ համբոյրով ի մի շափապատած...

Յովհաննիսեանը կասկածում է...

Ամեն ինչ ընդունելի է, երբ թեթև աչքով, մատների միջով ենք նայում նոցա, բայց հենց որ փորձում ենք զոցա ստուգապէս վերահասու լինել և քննական աչքով զիտել, իսկոյն կասկած է առաջանում մեր մէջ զէպ զոցա հաւասարիութիւնը: Եւ Յովհաննիսեան անընդհատ կասկածում է, ուրեմն և միշտ քննական աչքով է նայում ամեն ինչի վերայ, իսկ յաւիտենական կասկածը քայքայում է մարդու հոգին:

Ինչպէս ցուրտ ձմեռ միւրը կասկածոս
Քաղեց, խորտակեց ծաղիկը կեանիքիս...

Այս կասկածի շնորհիւ միայն նա եղերում է իր մոտիւները և մի ամբողջութեան վերածում:

Ա, Բ, Գ, Դ, Ե, Ֆ

Երես	առող	սխալ	ուղիղ
19 ներք.	12	հատ	հատոր
29 վեր.	4	զործի	զրածի
37 ներք.	5	թողնել	թուշել
39 վեր.	4	ուրախ բառը	կրկնուել է.
47 »	12	ինչու	ինչու և
53 ներք.	8	սրախն	արտին
54 վեր.	1	որ	ուր
58 վերջ.		արտա-	արտաքին
66 վեր.	11	որ	որի
68 »	4	ունակութիւնից	ունակութիւնը
69 ներք.	12	մահից	բանից
79 վեր.	11	կտեսնեն	կտեսնենք
84 »	3	զուր առասողելներ աւելորդ է:	



Պատրաստ է և շուտով տպագրութեան կը
յանձնուի «Ռուսոսն իբրև փիլիսոփայ-մանկավարժ»:



Դիմել Երեանի գրախանութներին:

Դան



ՀՀ Ազգային գրադարան



NL0389155

70.080